Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

18(556)
15.06.2019
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂԸ ԿԱՐ, ԻՍԿ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹԸ ՇԱՀԵՑԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԲՈԼՈՐ ԹԻՄԵՐԸ

Ճշմարիտ է ասված, որ սպորտը լավագույն դեսպանն է աշխարհում: Հունիսի 1-9-ը Արցախում տեղի ունեցած՝ Չճանաչված երկրների ֆուտբոլի հավաքականների եվրոպական առաջնությունը միայն մարզական կրքերով չէր առանձնանում, այն նաև Արցախի Հանրապետության շնորհանդեսն էր ոչ միայն եվրոպական աշխարհատարածքում:

ԱՀ պետական նախարար, CONIFA Sportsbet.io European Football Cup 2019-ի կազմկոմիտեի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանի՝ առաջնության պաշտոնական փակման ժամանակ ունեցած ելույթում հիրավի՛ ուշագրավ տվյալներ կան: Այսպես, խաղերին մասնակցել է տարբեր երկրներից ժամանած 8 թիմ, պաշտոնատար անձանց և ֆուտբոլիստների ընդհանուր թիվը 300 է, հավատարմագրված լրագրողները՝ 114, մարզադաշտերի քանակը՝ 4: Առաջնության ընթացքում հրապարակվել են ավելի քան 2000 հոդվածներ և լուրեր (կարծում ենք՝ առաջիկայում այդ թիվը նկատելիորեն կավելանա), կազմակերպվել են շուրջ 80 մշակութային միջոցառումներ, ներգրավվել՝ 270 կամավորներ: Հունիսի 1-9-ը կայացել են 20 պաշտոնական և 1 ոչ պաշտոնական խաղեր (այս վերջինը՝ CONIFA-ի ղեկավարության և լրագրողների միջև), որոնց շրջանակում խփվել է ավելի քան 60 գոլ: Այս ցուցանիշների համապատկերին խիստ էական է, որ մարզական տասնօրյակում չի գրանցվել տոնականությունը խամրող որևէ դեպք: Թե՛ կազմակերպչական և թե՛ կարգապահական առումներով գնահատման սանդղակը բավականին բարձր է եղել հենց հյուրերի գնահատմամբ:

CONIFA-ի գլխավոր քարտուղար Սաշա Դյուրկոպը տվյալ առնչությամբ մասնավորապես ասել է. «Դժվարանում եմ բառեր գտնել մրցաշարը գնահատելու համար: Շատ հաճելի էր և գոհացուցիչ մրցաշարի անցկացումն Արցախում: Մեզ համար մեծ պատիվ էր: Շնորհակալություն ենք հայտնում բոլորին՝ առաջնությունը կյանքի կոչելու համար: Հատկապես պետք է ընդգծել կամավորների աջակցությունը, որոնք Արցախի դեմքն են: Կային նաև մարդիկ, ովքեր ընդգրկված էին կազմակերպչական աշխատանքներում, սակայն հանրությունը նրանց չէր տեսնում»: Նա միաժամանակ համոզմունք է հայտնել, որ Արցախում կարելի է նման բարձր մակարդակով անցկացնել նաև CONIFA-ի ֆուտբոլի աշխարհի առաջնություն:

Հատկանշական է CONIFA-ի Եվրոպայի կոնֆեդերացիայի նախագահ Ալբերտո Ռիսկոյի խոսքը. «Մենք հեռանում ենք մի երկրից, որը մի օր կունենա իր ֆուտբոլի ազգային լիգան: Հենց սա է CONIFA-ի կարևորագույն նպատակներից մեկը՝ աջակցություն ցուցաբերել ֆուտբոլի ֆեդերացիաներին»:

Զուտ մարզական պատրաստվածության տեսանկյունից Արցախի ֆուտբոլի հավաքականի հնարավորությունները չի կարելի թերագնահատել: Մենք ականատես ենք, թե այլ մարզաձևերում, որոնք գուցե թե նույնիսկ ավանդական կարելի է համարել Արցախի համար, որպիսի հաջողություններ են արձանագրվում աշխարհի և եվրոպական հարթակներում: Այդ բնագավառներում կա համապատասխան մարզչական դպրոց և բազա, և դա մեր մարզիկներին պարբերաբար մղում է հաղթական հարթակների միջազգային ամենապատվաբեր մրցումներում: Խորհրդային տարիներին, ի դեպ, ֆուտբոլն Արցախում լայնորեն տարածված մարզաձև էր: Տեղի «Ղարաբաղ» թիմը հաջողությամբ խաղում էր ԽՍՀՄ առաջնության «Բ» խմբում, և եթե չլիներ Ադրբեջանի խտրական վերաբերմունքը՝ արհեստական խոչընդոտներ ստեղծելու դրսևորումներով, ապա ղարաբաղցի ֆուտբոլիստները կարող էին վստահաբար նվաճել «Ա» խմբում խաղալու իրավունքը, ինչը ինքնավար մարզի համար բավական մեծ մակարդակ էր համարվում:

CONIFA-2019-ը բարենպաստ հնարավորություն է արցախցի ֆուտբոլիստների համար, և հինգերորդ տեղը գրավելու փաստն արդեն վկայում է առկա ներուժի մասին: Շատ կարևոր է, որ շրջաններում մարզադաշտեր են կառուցվել, որտեղ այսուհետ ևս կբորբոքվեն ֆուտբոլային կրքերը՝ թող որ առայժմ ավելի ցածր մակարդակներում, բայց և տեսանելի հեռանկարներով:

Իսկ ավելի գլոբալ առումով, իհարկե, CONIFA-2019-ը Արցախի Հանրապետության գոյության քաղաքական շեշտումն էր: Տարալեզու ԶԼՄ-ները ամենատարբեր աշխարհագրական լայնություններում վերստին կհաստատեն երիտասարդ այս պետության լինելությունը՝ իբրև կայացած, ժողովրդավարական ու իր անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու ունակ մի երկիր, որը քաղաքակիրթ աշխարհի հետ համաքայլ ընթանալու իրավունքն ու կարողությունն ունի:

CONIFA-2019-ը միանգամայն դիպուկ է բնութագրել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը՝ առաջնությունը յուրօրինակ մարտահրավեր անվանելով, որն Արցախը կարողացավ պատվով կատարել: «Համատեղ ուժերով յուրաքանչյուրս մեր ներդրումն ունեցանք այս նախագծի իրականացման ընթացքում: Այն իր շուրջը համախմբեց հազարավոր մարդկանց: Ձևավորվեց կամավորական շարժում: Յուրաքանչյուրն ուզում էր մասնակցություն ունենալ նախագծի իրականացման գործում: CONIFA-ի առաջնության գավաթը շահեց Հարավային Օսիայի հավաքականը, սակայն բոլոր թիմերը շահեցին բարեկամության գավաթը և այստեղից կհեռանան բարեկամացած ու հարստացած»,- ասել է նախարարը:

Եվ դա այդպես էլ կա. արցախյան ֆուտբոլային տոնը դեռ երկար կղողանջի հայ և այլազգի բազմահազար մարզասերների սրտերում: Համարենք այն հրաշալի մեկնարկ նորանոր մարզական տոների և ինչու չէ՝ հաղթանակների համար:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԱՆԿԱԽ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ (ԿՈՆԻՖԱ) ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ



Թանկագի՛ն հայրենակիցներ,
Հարգարժա՛ն հյուրեր,
Հարգելի՝ մարզիկներ եւ մարզիչներ,
Սիրելի՛ ֆուտբոլասերներ,

Այսօր Արցախում մեծ եւ նշանակալի իրադարձություն է. մեր երկրում անց է կացվում Անկախ ֆուտբոլային ասոցիացիաների կոնֆեդերացիայի՝ ԿՈՆԻՖԱ-ի Եվրոպայի առաջնությունը:

Արցախ են ժամանել բազմաթիվ հյուրեր տարբեր երկրներից, այդ թվում նաեւ պետական այրեր: Ուզում եմ ողջունել այստեղ մեզ հետ գտնվող եղբայրական Հարավային Օսիայի Հանրապետության-Ալանիա պետության Նախագահ Անատոլի Բիբիլովին, ԿՈՆԻՖԱ-ի նախագահ Պեր-Անդերս Բլինդին, ԿՈՆԻՖԱ-ի Եվրոպայի կառույցի ղեկավար Ալբերտո Ռիսկոյին եւ մեր բոլոր հյուրերին: Մեզ համար մեծ պատիվ է ընդունել ձեզ արցախյան հողում:

Նման միջազգային մարզական միջոցառում մեր երկրում տեղի է ունենում առաջին անգամ, եւ այն պատշաճ մակարդակով անցկացնելու համար կատարվել է ծավալուն ու քրտնաջան աշխատանք:

Ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել Անկախ ֆուտբոլային ասոցիացիաների կոնֆեդերացիայի Եվրոպայի առաջնության կազմակերպիչներին, բոլոր նրանց, ովքեր իրենց ավանդն են ունեցել այս գեղեցիկ ու կարեւոր մրցաշարի անցկացման գործում: Հուսով եմ, որ ե՛ւ մարզիկները, ե՛ւ ֆուտբոլասերները բավականություն կստանան խաղերից:

Սպորտը, հատկապես ֆուտբոլը, այն բացառիկ բնագավառներից է, որոնք պետք է միավորեն ժողովուրդներին եւ մարդկանց, ամրապնդեն նրանց միջեւ բարեկամությունն ու փոխադարձ հարգանքը, նպաստեն կապերի հաստատմանը, խթանեն մարդասիրական շփումներն ու փոխգործակցությունը:

Սպորտը չի ճանաչում սահմաններ եւ սահմանափակումներ, խտրականություն եւ երկակի ստանդարտներ: Այն խաղաղության խորհրդանիշ է, որտեղ պայքարն արդար է, եւ հաղթում է նա, ով ավելի լավ է պատրաստված:

Հարգելի՛ բարեկամներ,

Արցախում ֆուտբոլի նկատմամբ միշտ եղել է հատուկ վերաբերմունք, եւ մենք ունենք ձեւավորված ավանդույթներ: Շատերիս համար մեր լավագույն մարզիկները եղել են ոգեշնչման աղբյուր, յուրաքանչյուր պատանի ուզում էր նմանվել նրանց:

Հուսով եմ, որ այս մրցաշարը ի հայտ կբերի ֆուտբոլային նոր դեմքերի, ովքեր օրինակ կծառայեն մատաղ սերնդի համար եւ իրենց խաղով մեզ կպարգեւեն բազմաթիվ գեղեցիկ ու հիշարժան պահեր, երջանիկ ու տպավորիչ ակնթարթներ՝ այս առաջնությունը վերածելով իսկական մարզական տոնի:

Ես հաջողություն եմ մաղթում բոլորիդ, եւ թող հաղթի ուժեղագույնը:

Շնորհակալություն:

Ք. Ստեփանակերտ, 1 հունիսի 2019թ.

ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ

Բեյրութի Հայկազյան համալսարան-Արցախ

ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐ. ԿԱՄՈՒՐՋՆԵՐՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ

Ամիսներ առաջ Ստեփանակերտում Արցախի պետական համալսարանի և Արտաքին գործերի նախարարության ու Բեյրութի Հայկազյան համալսարանի միջև կնքվել էր համագործակցության հուշագիր: Այդ շրջանակում այս օրերին Արցախում է Հայկազյանի ուսանողական պատվիրակությունը, որին ընդունեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Նախարարը ողջունեց հուշագրի իրականացման գործնական այդ քայլը ուսանողների կողմից: Նշեց, որ հուշագրի կետերից մեկն էլ վերաբերում էր փոխադարձ այցելություններին: «Կարծում եմ՝ մենք արդեն սկսել ենք համագործակցության ծրագիրը և շահագրգռված ենք ավելի սերտացնելու այն, որովհետև Հայկազյան համալսարանը սփյուռքի մեր միակ պետական ճանաչում ունեցող հայկական համալսարանն է, և շատ կարևոր եմ համարում համագործակցությունը երկու բուհերի միջև»,-ասաց Ն. Աղաբալյանը: Ըստ նրա՝ համագործակցության ծրագրերը կարող են տարբեր լինել՝ թե համալսարանների միջև և թե ընդհանուր կրթական համակարգին առնչվող: Նա լիահույս է, որ կհաջորդեն ծրագրերը ուսանողների և դասախոսների փոխանակման առումով ու կրթամշակութային այլ միջոցներով: Օրինակ՝ շատ կուզենար համատեղ նախագծեր իրականացնել ամառային ճամբարների կազմակերպման ուղղությամբ: Հատկապես այս շրջանում անչափ կարևոր է փոխգործակցությունը: «Ցավալի է խոստովանել, որ մենք պատերազմի և արտաքին վտանգի ժամանակ ենք ավելի շատ համախմբվում, իսկ խաղաղ ժամանակներում մի քիչ հեռանում ենք իրարից, ինչը շատ վտանգավոր է»,-նկատեց նախարարը՝ հավելելով, որ ամեն ինչ պետք է անել այդ կապերն ավելի սերտացնելու, միմյանց մոտիկից ավելի լավ ճանաչելու և հարազատանալու համար:

-Միմյանց հետ շփվելուց միշտ ոգևորվում ենք, իսկ այդ ոգևորությունը հոգեպես անհրաժեշտ է մեզ: Եվ Արցախյան առաջին պատերազմում և ապրիլյան քառօրյայում ոգու ուժով հաղթեցինք, և այդ ոգին անընդհատ սնել է պետք:Ն. Աղաբալյանն ուսանողներին առաջարկեց ավելի նախաձեռնողական լինել. Մենք պատրաստ ենք ձեր ցանկացած ծրագրում մեր մասնակցությունն ունենալ»:

Պատվիրակության ղեկավար՝ Հայկազյան համալսարանի ուսանողական գրասենյակի տնօրեն Ռազմիկ Գաբրիելյանն ասաց, որ ներկայացել են համալսարանում գործող մի շարք ակումբներից մեկի՝ Heritage Club (Մշակույթի կենտրոն)-ի անդամները: Նպատակն է Արցախի հետ կամուրջներ հիմնել: Հավաքել և Արցախ են բերել 1000 կտոր գրականություն ԱրՊՀ-ի և ԱԳՆ-ի համար, որն իրականացրել են նախորդ օրն այդտեղ ունեցած հանդիպումների ժամանակ:

Հանդիպումն անցավ ջերմ, անկեղծ երկխոսության ձևաչափով: Ն. Աղաբալյանը պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին Կոնիֆայի խաղերին, ընդհանրապես Արցախի մարզական կյանքին, շրջանավարտների նախընտրած մասնագիտություններին, կարիքավոր երեխաների ուսուցմանը, դպրոցների տեխնոլոգիական հնարավորություններին և այլն: ԿԳՍ նախարարը առիթն օգտագործելով՝ պատմեց Արցախի դպրոցներում ֆիզիկա, քիմիա առարկաների ուսուցիչների խիստ պահանջվածության մասին և այդ առնչությամբ տեղեկացրեց «Դասավանդիր, Հայաստան» նախագծի մասին, որի ծրագրով Արցախի 17 դպրոցներում աշխատում են նույնքան մասնագետներ և նախատեսվում է նույնքան էլ ներգրավել նոր ուսումնական տարում և առաջարկեց սփյուռքահայ ուսանողներին նույնպես մասնակցել, որի շնորհիվ նաև համայնքային զարգացման ծրագրեր են իրականացվում:

Պատվիրակության ղեկավարը, շնորհակալություն հայտնելով սրտաբաց ընդունելության համար, ասաց, որ Բեյրութ վերադառնալուց հետո համալսարանի ղեկավարության և ուսանողների հետ կքննարկեն ստացված առաջարկները և ըստ առաջնահերթության ձեռնամուխ կլինեն դրանց իրականացմանը: Իսկ մինչ այդ կայցելեն Արցախի ու Մայր Հայաստանի պատմամշակութային վայրերը:

Ուսանողական պատվիրակությանն ընդունել է նաև ԱՀ ԱԳ նախարար Մասիս Մայիլյանը: Գերատեսչության ներկայացուցիչ Երվանդ Հաջիյանից տեղեկացանք, որ Հուշագրի համաձայն, մայիս ամսում ԱԳՆ երկու աշխատակից վերապատրաստվել է Բեյրութի Հայկազյան համալսարանում: Աշնանը ևս մի քանի աշխատակիցներ 1-3 ամսով կվերապատրաստվեն այնտեղ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԱՐՏՈՒՆՈՒ Հ.1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Յուրաքանչյուր մարդու կյանքի ամենալուսավոր, ամենագունեղ փուլը մանկությունն է, ուր իր տեղն ունի մանկապարտեզը՝ մանուկների երկրորդ տունը: Որքան պատասխանատու, նվիրված և գիտելիքների պաշարով զինված է դաստիարակ մանկավարժը, այնքան արդյունավետ ու որակյալ է նրա աշխատանքը, իսկ ինքը՝ սիրված սանիկների կողմից: Ասել է թե՝ մանկավարժի մասնագիտությունը հետաքրքիր է և պատասխանատու, քանի որ նրա ուսերին են դրված մատաղ սերնդի դաստիարակությունն ու ուսուցումը:

Նախակրթարաններում հաճախակի են կազմակերպվում կոլեկտիվ դիտումներ, սեմինար-պարապմունքներ, փորձի փոխանակում ու հանրագումարային պարապմունքներ, որոնք մի քանի նպատակ են հետապնդում՝ երեխաների գիտելիքների ստուգում, մանկավարժների փորձի կատարելագործում ու փոխանակում, քննարկումների մշակույթի ձևավորում: Փորձի փոխանակման ընթացքում ներկայացրած նորարարական մոտեցումներն ու մեթոդները երիտասարդ և փորձառու մանկավարժների աշխատանքը դարձնում են առավել արդյունավետ ու որակյալ:

Օրերս Մարտունու հ.1 պետական մանկապարտեզի ավագ «Թիթեռ» խմբում կայացավ երաժշտություն և պար առարկաների հանրագումարային բաց պարապմունք (երաժշտավար՝ Կարինե Բալայան, պարուսույց՝ Ալվարդ Մանասյան): Պարապմունքին ներկա էին ԱՀ ԿԳՍ նախարարի խորհրդական Իրինա Գրիգորյանը, մանկապարտեզի կոլեկտիվը, դաստիարակներ և երաժշտավարներ Ստեփանակերտի հ.3, Շահումյանի և Շուշիի մանկապարտեզներից:

Դասի թեմա՝ «Կրկնել ուսումնասիրված երաժշտական նյութերը», նպատակը՝ զարգացնել երեխաների որոշակի երաժշտական ունակությունները, մասնավորապես՝ երաժշտության ընկալումը, երաժշտառիթմական զգացողությունը, ռիթմիկ շարժումներ կատարելու, տարածության և ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողությունները ու գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

Կենտրոնացնել երեխաների ուշադրությունը՝ նրանց հաղորդելով որոշակի գիտելիքներ: Առաջացնել սեր դեպի երաժշտությունը, տարբերել երաժշտական ձայները, տարբերել երգը մեղեդուց: Երեխաների մեջ երաժշտության միջոցով առաջացնել հայրենասիրություն և սեր դեպի ազգային մշակույթը:

Դասն անց կացվեց մանկապարտեզի դահլիճում: Դահլիճը տրամադրող էր՝ կահավորված համապատասխան պարագաներով:

Քանի որ ավագ խումբը կրում է «Թիթեռ» անունը, ուստի պարապմունքը սկսվեց հյուր եկած խորհրդանշական «թիթեռներով»: Կազմակերպված, գեղեցիկ և ընդօրինակելի պարապմունքի ընթացքում երաժշտավարն ու պարուսույցը կիրառել էին սեփական մտահղացումներ, ֆիզդադարներ, միջառարկայական կապ և այլն: Երեխաները երգեցին հայրենասիրական ու մանկական երգեր, ընկալեցին ու սովորեցին նոր մատուցվող երգը, տարբերեցին ու խմբավորեցին երաժշտական գործիքները՝ լարային, փողային, ստեղնաշարային, հարվածային:

Պարուսույց Ա.Մանասյանը պարապմունքն սկսեց մարմնամարզությամբ, այնուհետև երեխաները պարեցին ուսումնական տարվա ընթացքում սովորած պարեր: Նրա կեցվածքը, դիրքը, պահվածքը համապատասխան էր մասնագիտությանը: Երկու դեպքում էլ դասատուները հասան իրենց նպատակին: Նախադպրոցականներն ակտիվ էին, տիրապետում էին երաժշտություն և պար առարկաների ծրագրային նյութերին:

Պարապմունքի ավարտից հետո կատարվեց քննարկում: Իրենց տպավորություններով արտահայտվեցին հրավիրվածները: Պարապմունքի մասին իր գոհունակությունը հայտնեց նախարարի խորհրդական Ի.Գրիգորյանը՝ ընդգծելով, որ երեխաները նախնական գիտելիքներով ու ընդունակություններով պատրաստ են հաճախելու արվեստի դպրոց: Կարծիքներ հայտնեցին նաև մյուս հյուրերը՝ նշելով, որ նմանատիպ միջոցառումներն անհրաժեշտություն են պարապմունքները հետաքրքիր ու օգտակար կազմակերպելու համար, քանի որ նրանք իրենց հետ կտանեն մի շարք օրինակելի մեթոդներ:

Երաժշտավարն ու պարուսույցը հյուրերին տեղեկացրին, որ ավագ խմբի շնորհաշատ սանիկները մասնակցել են քաղաքային ու շրջանային մի շարք մշակութային միջոցառումների ու փառատոների: Խոսելով արձանագրած հաջողությունների մասին՝ նրանք նշեցին, որ էլեկտրադինամիկ-բարձրախոսի, ինչպես նաև միջոցառումների համար անհրաժեշտ հագուստի բացակայությունը լուրջ խոչընդոտներ է առաջացնում արդյունավետ աշխատանքում:

Վերջում ելույթ ունեցավ մանկապարտեզի տնօրեն էմմա Երեմյանը: Նա շնորհակալություն հայտնեց երաժշտավարին ու պարուսույցին փորձի փոխանակման հետաքրքիր և օրինակելի դաս կազմակերպելու համար: Նա շնորհակալական խոսք ասաց հյուրերին և կոլեկտիվի կողմից պատրաստակամություն հայտնեց մասնագիտական հարցերում ուժերը ներածին չափ օգնել գործընկերներին:

Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ

ԱՅԲ-ԲԵՆ

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՇՔԱՀԱՆԴԵՍ ՇՈՒՇԻԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Երկրորդ անգամ եմ լինում Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: Առաջին անգամ այս ուսումնական տարվա սկզբին էր: Ծոռնուհուս՝ Օլեյսայի հետ մասնակցում էի Առաջին զանգի արարողությանը: Ծոռնուհիս հայկական այբուբենի հնչյուններին ծանոթ է մանկապարտեզից, իսկ այսօր իր համադասարանցիների հետ միասին մասնակցում է առաջին քննությանը: Դասվար Սուսաննա Բեգլարյանն ուստարվա ինն ամիսներին խորամուխ է եղել երջանիկ աստղի տակ ծնված 33 աղջիկ-տղաների անմշակ հոգիներում և բոլորին զինել հայոց այբուբենով: Ու ամփոփելով ինն ամսվա կատարածը, վստահ, որ իր սովորեցրածը 33 փոքրիկները յուրացրել են, ճակատը բաց նրանց բերել է ծնողներին և հարազատներին «հաշվետվություն» տալու:

Նախ եղանք դասասենյակում, որը չնայած նեղ էր 33 աշակերտի համար, բայց բոլորիս հիացմունք պատճառեց ճաշակով կահավորվածությունը: Ծաղիկների ու փուչիկների մեջ խեղդվող գրատախտակի վերևում պատի ամբողջ երկայնքով հայոց այբուբենի խոշորատառ գունավոր տառերն են շարված համապատասխան նկարներով: Գրատախտակի աջ կողմում Սուրբ Մաշտոցի մեծադիր դիմանկարն է՝ քառասյուն այբուբենով, մյուս պատերին տարվա եղանակները բովանդակող վահանակներ են: Առանձին դասավորվածությամբ է կազմված 33-ի ժպտերես նկարների վահանակը: 20 տղա և 13 աղջիկ՝ զինված անարյուն ճակատամարտում սուրբ Մեսրոպ Մաշտոցի հաղթանակած զինվորներով, յուրաքանչյուրն իր անվան սկզբնատառով գլխարկ-սաղավարտով, ձեռքներին ծաղիկներ ու փուչիկներ, դուրս եկան 1-ին «ա» դասարանից և միջանցքով ծափահարությունների տակ թռչկոտելով շարժվեցին դեպի ակումբ, որի բեմը նույնպես կահավորված էր բարձր ճաշակով: Աչք էին շոյում պատին փակցված ոսկեզօծ արևն ու գույնզգույն տառերը փուչիկներով, իսկ բեմի երկայնքով օդում շողշողում է. «Այբուբենի շքահանդես» վերտառությամբ ցուցապաստառը, որը կարծես պահվում է խաղաղության խորհրդանիշ ճերմակաթև աղավնիների միջոցով:

Ծնողների, հարազատների, ուսուցիչների, բազմաթիվ հյուրերի ծափահարությունների ներքո բեմ են բարձրանում օրվա հերոսները և շարվում կիսաշրջան, քանի որ բեմի լայնությունը չի բավարարում մի տողանի վրա շարվել:

Այբուբենի շքահանդեսը բացում է դպրոցի տարրական մասի փոխտնօրեն Ինեսա Պետրոսյանը, որն ի սրտե շնորհավորելով երեխաներին գրաճանաչ դառնալու առթիվ՝ իր խոսքը համեմում է Ս.Կապուտիկյանի «Լսիր, որդիս» բանաստեղծության արտասանությամբ:

Անչափ հուզիչ է դասվար Սուսաննա Բեգլարյանի ողջույնի խոսքը և «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հիշատակին» արտասանությունը: Ծնողներն ուրախ են, որ իրենց երեխաները մի այնպիսի դասվարի ձեռքում են, որն ունի և՛ երաժշտական, և՛ բարձրագույն մանկավարժական կրթություն: Ս.Բեգլարյանը 1981թ. ավարտել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանը, իսկ 1987-ին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկայի բաժինը: Ուղիղ 18 տարի որպես դաստիարակչուհի աշխատել է քաղաքի հ.3 մանկապարտեզում: 1994թ. տեղափոխվել է Շուշի, որպես դասվար աշխատանքի ընդունվել «Արամ Մանուկյան» դպրոց-վարժարանում, իսկ 2012-ից աշխատում է Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում ու արդեն վեցերորդ անգամ է, որ առաջին դասարանցիներ է ընդունել: Համատեղությամբ որպես դաշնամուրի դասատու աշխատում է Շուշիի արվեստի դպրոցում: Ահա այդ է պատճառը, որ ամբողջ արարողության ընթացքում ինքն էր նվագում երեխաների հետ, երգում ու պարուսույցի և երաժիշտի կարիք չէր զգում:

Այբուբենի շքահանդեսն սկզբից մինչև վերջ տեսագրվում էր, բայց դրանով ծնողները չեն բավարարվում, յուրաքանչյուրն իր համար տեսագրում էր իր «տեսախցիկով», մասնավորապես այն պահերը, երբ իրենց երեխան էր արտասանում կամ պարում:

Ինձ վրա (նաև՝ մյուսների) լավ տպավորություն թողեցին երեխաների կարգապահությունը, անկաշկանդվածությունն ու համարձակությունը: Արտասանում էին արտահայտիչ ու բարձր ձայնով, իսկ փոքրիկ Դավիթ Ասրյանի կողմից «Բանակում» երգը ցնծությամբ ընդունվեց, որին ձայնակցեցին բոլորը.

Զինվոր եմ փոքրիկ հայոց բանակի,
Հարազատ թոռնիկն եմ քաջ Անդրանիկի,
Համազգեստ հագիս ունեմ ես զինվորական
Եվ ուսիս զենք ու զրահ, այն էլ՝ իսկական...

Հիացած եմ... Որքա՜ն լավ է սազում համազգեստը և ինչպիսի՜ պատասխանատվությամբ է երգում, իսկ մյուս 19 տղաներն էլ պակաս չեն նրանից: Հիանալի է և աղջիկների պարը, անհատական պարերը նույնպես: Երեխաներից ամեն մեկն իր տառը շատ լավ ներկայացրեց: Թող ներեն, որ ոչ մեկի անունը չեմ նշում, քանի որ չգիտեմ: Իսկ Օլեյսյան արտասանեց «Օ» տառի մասին.

Ես Օ տառն եմ, մի պարզ օղակ
Մեր հայերեն այբուբենում,
Ասես լինեմ ես աննման փայլուն շողակ:

Ես համարձակվում եմ դրան ավելացնել որպես Մեծ պապ.

«Օ» տառն եմ ես կլորիկ,
Տարբերվում եմ բոլորից,
«Օ» եմ կոչվում թե՛ մեր լեզվում
Եվ թե՛ օտար լեզվի այբուբենում,
Թեև «Օ» եմ հասարակ,
Մաշտոցի կողմից մոռացված,
Շատ ուրախ եմ ու հպարտ,
Որ ինձնով է գրվում՝ Օշական,
Նկարում եք արև, լուսին,
Ինձ եք դնում նրա միջին,
Իսկ հաշվի մեջ թեև զրո,
Օ-ներս են դարձնում միլիոն...

Լսում եմ 33-ի համարձակ ու հպարտ կեցվածքով արտասանությունները, դպրոցի փոխտնօրեն Լ.Մկրտչյանի ամփոփիչ սրտառուչ ելույթը, նրա բարեմաղթանքները՝ ուղղված առաջին դասարանցիներին, դասվարին ու ծնողներին և տեսնելով դպրոցի երկու փոխտնօրենների մասնակցությունը այս հանդիսավոր միջոցառմանը, համոզվում եմ, որ մեր երեխաների ուսման և դաստիարակության գործը մեծ ուշադրության կենտրոնում է, և կարծում եմ, որ դպրոցի տնօրինությունը հարց կբարձրացնի ԿԳՍ նախարարության առաջ, որ նոր ուսումնական տարում երկրորդ դասարանցիների համար մի հաստիք էլ ավելացվի. լինեն «ա», «բ» և «գ» դասարաններ: Ճիշտ է, հարցը կապված է ֆինանսների հետ, բայց մեր անկախ ու ազատ պետությունը, կարծում եմ, այս հարցում միջոցներ չի խնայի:

Հիշում եմ, խորհրդային շրջանում մի դասարան բացելու համար ժողկրթբաժնի հատուկ տեսուչներ «ճամպրուկով» մեկնում էին Բաքու և այնտեղից ուրախ լուր բերում, իսկ այսօր, հուրախություն մեզ, այդ ուրախ լուրը մեր ձեռքերում է: Ես մի առիթով գրել եմ, որ մեր հանրապետությունում գյուղ կա, որտեղ 6 աշակերտ կա, 6-ն էլ՝ մի ընտանիքից և այնտեղ բացել ենք հիմնական դպրոց 8 ուսուցիչներով: Հասկանում եմ՝ ամեն ինչ պիտի անենք գուղը պահպանելու համար, բայց նույնը պետք է անենք Շուշիի նկատմամբ. չէ՞ որ Շուշին նոր է Շուշի դառնում, պետք է ամեն ինչով սատարենք:

Այբուբենի շքահանդեսի վերջում երեխաները նվերներ ստացան, իսկ դասվարը բաժանեց խմբանկարները՝ իր սրտի խոսքով.

Իմ մեջ ինչ կա, ծերն է լրիվ,
Սերս, խիղճս, շունչս, բառս,
Ձեզնից սերված իմ սրտի մեջ
Ձեր անունն է միայն գրված...

Իսկ ես տոնի առթիվ ծոռնուհուս համար որպես նվեր՝ «Լուսայգ» մանկապատանեկան թերթ բաժանորդագրվեցի:

Մառլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստ. աշխատող,
անհատ. թոշակառու ուսուցիչ

Հավերժի ճամփորդ

ԿՈՄԻՏԱՍ ԱՐՍԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ



Արցախի գրական ընտանիքը ծանր կորուստ կրեց: Հունիսի 11-ին կյանքից հեռացավ տաղանդավոր արձակագիր, հասարակական-քաղաքական, մշակութային անխոնջ գործիչ Կոմիտաս Արսենի Դանիելյանը:

Կոմիտաս Դանիելյանը ծնվել է 1947թ. սեպտեմբերի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Նոր Շեն գյուղում: Միջնակարգից հետո ուսումը շարունակել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում, ավարտել 1970թ.: 1971-1972թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1972-1978թթ. աշխատել է Արցախի ռադիոհաղորդումների մարզային կոմիտեում՝ որպես լրագրող, խմբագիր և ավագ խմբագիր: 1979-1989թթ. խմբագրել է Ասկերանի շրջանային «Կարմիր դրոշ» («Խաչեն») թերթը: 1990-1992թթ. «Հայաստանի Հանրապետություն» թերթի սեփական թղթակիցն էր Արցախում: 1993-1994թթ. խմբագրել է ԼՂՀ Գերագույն խորհրդի «Արցախ» պաշտոնաթերթը, 1995-ին՝ Արցախի գրողների միության «Եղիցի լույս» ամսաթերթը: 1995-1996թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում, աշխատել է ԼՂՀ մշակույթի նախարարության համակարգում: 2000-2006թթ. խմբագրել է «Հայրենյաց պաշտպան» թերթը, այնուհետև նրան վստահվել է Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրենի պաշտոնը: ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1989-ից, իսկ Արցախի գրողների և Հայաստանի գրողների միության անդամ՝ 1994-ից:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցելու համար արժանացել է ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» և «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներին:

Որպես գրող և լրագրող՝ Կ.Դանիելյանը ձեռք է բերել իր ինքնատիպ ձեռագիրը, որը պայմանավորված է քաղաքացիական պարտքի խորը գիտակցումով, երկրի ճակատագրի հանդեպ ունեցած ակտիվ դիրքորոշմամբ: Կ.Դանիելյանը բեղուն արձակագիր էր՝ աստվածային շնորհքով, աշխատասիրությամբ, բառի հանդեպ ունեցած պատասխանատվության զգացումով: Այդ են վկայում նրա «Անկնիք նամակներ», (1981), «Երաշտ տարի» (1989), «Արցախն իմ տունն է» (1994), «Երկու պատմվածք» (1999), «Արցախը՝ չսանձած նժույգ» (2006), «Դեմ-հանդիման» (1996), «Ճիչ» (2004), «Ամարասի զանգերը» (2006), «Պորտալար» (2007) և այլ ժողովածուներ: 2017-ին Երևանում հրատարակվեց Կ. Դանիելյանի ընտիր երկերի երկհատորյակը, որը ջերմորեն ընդունվեց ընթերցողների լայն շրջանակների և անվանի գրականագետների կողմից:

Կ. Դանիելյանի ավագ որդին՝ Նարեկը, որը սովորում էր ԱրՊՀ պատմության ֆակուլտետում, իր ուսանող ընկերների հետ նետվեց մարտի՝ դառնալով անհայտ ճակատագրի տեր զինվորյալ:

Կ. Դանիելյանը թողել է հարուստ գրական ժառանգություն, որը հայ գրականության անկախության շրջանի մնայուն էջերից է:

Կ. Դանիելյանի հիշատակը պայծառ կմնա նրա գրչակից ընկերների և նրան ճանաչողների սրտերում:

Արցախի գրողների միություն,
«Ազատ Արցախ» հանրապետական թերթ,
«Լուսարար» կրթագիտական թերթ

ՕՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆՆ Է, ԱՅՆ ԴԱՐՁՆԵՆՔ ՏՈՆ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ

Իմ ժողովրդի թախծապատ հոգուն միշտ էլ նեցուկ է եղել գալիքի նկատմամբ անկոտրում հավատը՝ հավատը լուսավոր ապագայի նկատմամբ: Օտարի սուրը բոլորովին չի ընկճել իմ ժողովրդի աննկուն ոգին, և որպես փյունիկ՝ կանգուն է մնացել մեր չքնաղ հայրենիքը՝ իր հոգևոր մշակույթով: Այս ամենի խոսուն վկան այսօրվա մեր պատմության քարե մատյաններն են: Արարող, ստեղծող, կառուցող հայ ժողովուրդն իր կառուցողական մեծ հմտությամբ երկիրը դարձրել է «բաց երկնքի տակ մեծ թանգարան»: Մենք ոչ միայն կառուցում ենք այն երկիրը, որտեղ երջանիկ են լինելու մեր երեխաները, այլև մեր ամենօրյա վարքն ու գործը, մեր նպատակներն ու աշխատանքը չափում ենք երեխաների գնահատականով: Եվ երջանիկ է նա, ով արժանանում է այդպիսի գնահատանքի: Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ հունիսի 1-ին բարերար Աշոտ Ջիվանյանի հովանավորությամբ Քերթի նախադպրոցական բաժանմունքի սանիկները պատմաճանաչողական շրջայց կատարեցին դեպի Սուրբ Ամարաս վանքը, որտեղ անց կացվեց տոնական միջոցառում: Այն կազմակերպել էր ավագ խմբի դաստիարակ Վարսենիկ Սարգսյանը: Բացման խոսքում նա ասաց.

- Շնորհավոր ձեր տոնը, սիրելի՛ փոքրիկներ: Մենք ուզում ենք ձեզ միշտ տեսնել առողջ, կայտառ ու ապահով: Թող ձեր ծնողները միշտ լինեն ձեր կողքին ու լինեն այնքան սիրով, որ այդ սերը լինի ձեր ամենամեծ ուսուցիչը: Թող նրանք լինեն այնքան ողջամիտ ու անքան կարող, որ ձեզ մեծացնեն որպես իսկական հայուհիներ ու հայ պատանիներ, որ լավ սովորեք, դառնաք լավ մասնագետներ, հետո՝ լավ ծնողներ, սիրեք ձեր հայրենիքը ու ձեր գործով վարձահատույց լինեք նրան:

Այնուհետև ելույթ ունեցան սանիկները, ասմունքեցին, երգեցին, իրենց հոգու գոհունակությունը հայտնեցին այդ գեղեցիկ ու անանխադեպ օրվա համար: Իսկ արվեստի դպրոցի կրտսեր խմբի աշակերտները պարեցին նրանց համար (պարուսույց՝ Մարգարիտա Վանյան): Որից հետո Հայր Գեղարդը կատարեց երեխաների օրհնության կարգ և նրանց բաժանեց օրհնած խաչեր:

Երեխաները շատ ուրախ ու երջանիկ էին նման ուշադրության արժանանալու համար: Նրանց մաքուր հոգիներում ու անկեղծ աչքերում արտահայտված էին մեծ գոհունակություն և գնահատանք դեպի բարերարը, որ իրենց օրը դարձրեց տոն…

Բոլորի անունից մեր երախտագիտությունն ենք հայտնում հարգարժան բարերարին, Հայր Գեղարդին և բոլոր նրանց, ովքեր ձեռնամուխ են եղել նման կարևոր միջոցառման իրականացմանը:

Անուշ ՔԱՄԱԼՅԱՆ

ԿՐԹՕՋԱԽ

ՑԱՎ, ՈՐ ԲՈԼՈՐԻՆՍ Է

Վերջերս Սարդարաշենի հիմնական դպրոցում կայացավ Նորագյուղի մեթոդփնջի փնջային նիստը: Երբեմնի այս շեն գյուղի դպրոցը, որը կրթել է բազում անվանի մարդիկ, աշխատասեր ու հայրենասեր սերունդներ, հիմա ընդամենը 9 աշակերտ ունի: Գյուղը դատարկվում է: Այն իր առաջին հարվածը ստացավ, երբ նույն խոշորացված կոլտնտեսության անդամ մեկ այլ գյուղ՝ Նորագյուղը, վերաբնակեցվեց, և ժամանակի հրամայականով մի խումբ սարդարանշինցիների ընտանիքներ տեղափոխվեցին նոր կառուցվող գյուղը: Հետո կոլտնտեսությունների վերացումից հետո գյուղը ջլատվեց: Արցախյան պատերազմի ժամանակ սարդարաշենցիներն արիաբար կռվեցին ու պաշտպանեցին մի կարևոր «դարպաս» Խաչենագետի ադրբեջանաբնակ գյուղերի հրոսակներից՝ տալով զոհեր՝ ջահել-ջիվան տղաներ, որոնք կարող էին շենացնել գյուղը: Սոցիալական պայմանների անբավարարությունն էլ գումարվեց այդ ամենին (ջրի պակասը, գազի բացակայությունը, աշխատատեղերի պակասը և այլն), ու հիմա գյուղում բնակիչները սակավաթիվ են: Այսպիսին է գյուղի ճակատագիրը ու, հետևապես նաև՝ դպրոցի: Ժամանակին դպրոցն ունեցել է հարյուրավոր աշակերտներ, վաստակաշատ մանկավարժների մի ստվար բանակ, որոնց կրթած աշակերտները հետագայում անվանի հայրենասեր մարդիկ են դարձել:

Փնջային նիստում նախատեսված էր ընդօրինակման դաս «Հայոց եկեղեցու պատմություն»-ից, միջոցառում՝ «Քիչ ենք, բայց սարդարաշենցի ենք» և զեկուցում՝ «Դպրոցը, ընտանիքը և հասարակությունը»: Ընդօրինակման դասն անցկացվեց միացյալ դասարանում, իսկ դասի թեման համընկավ Սուրբ Զատիկին: Ուսուցչուհի Լ.Գրիգորյանը, դասը կապելով եկեղեցական այդ մեծ տոնի հետ, անչափ հարուստ հոգևոր տեղեկություններով հեղեղեց դասի ընթացքը: Նրա ասածները և՛ հետաքրքիր էին, և՛ համոզիչ, և՛ ուսանելի: Մեր աշակերտներին ճիշտ հոգևոր դաստիարակություն տալու համար մեզանում պակասում են նման բանիմաց մասնագետներ: Իսկ դասին անհրաժեշտ ցուցադրական պարագաներով հիացել էինք: Այստեղ ուսուցչուհուն օգնել էր ռուսաց լեզվի շնորհաշատ ուսուցչուհի Գ. Գրիգորյան-Ավանեսյանը, որի՝ պատին արված գյուղի տոհմածառ-նկարը զարմացրել ու հիացրել էր ներկաներիս:

Իսկ ի՞նչ ասեմ միջոցառման մասին, որը շատ լավ էր կազմակերպված, և ընդգրկված էին դպրոցի բոլոր 9 աշակերտները, բայց իմաստով այն հուզեց ու անչափ տխրեցրեց ներկաներիս (կազմակերպիչ՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ս. Գրիգորյան): Հենց միջոցառման վերնագիրը հուշում էր այդ: Աշակերտները ներկայացրին գյուղի պատմությունը, խնդուկները, թևավոր դարձած խոսքերը, իսկ վերջում նրանց խոսքում խնդրանք կար և հույս: Հույս, որ մահանում է վերջինը.

Կաղնին ընկավ: Եվ մի վայրկյան
Նայեց դարեր ապրած տեղին
Ու տեսնելով, որ շիվեր կան,
Հանգստացած պառկեց հողին:

Վերջում ցուցադրվեց սրտաճմլիկ տեսաֆիլմ համանուն վերնագրով, որի հեղինակները նույնպես դպրոցի ուսուցիչներն էին: Այդ տեսաֆիլմը տեղադրվել է նաև համացանցի տարբեր սոցկայքերում՝ հույսով, որ կգտնվեն բարի մարդիկ, որոնք մի ճար կանեն գյուղի ու դպրոցի գոյատևման համար: Երիտասարդ ուսուցիչների համերաշխ կոլեկտիվ է գլխավորում դպրոցի տնօրեն Ն.Սվլիկյանը: Նրանցից տեղաբնակները միայն 4 հոգի են, մյուսները երթևեկող են: Եվ բոլորն էլ անչափ նվիրված են դպրոցին ու ամեն ինչ անում են դպրոցը պահպանելու համար: Դա ևս մեծ հայրենասիրություն է:

Մենք հեռացանք գյուղից՝ նրանցով հիացած, բայց ցավի մորմոքը մեր սրտերում:

Լ. ՀԱՅՐԻՅԱՆ
Նորագյուղի Վ.Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի ՄԿԱԳՏՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԱՆՏԱՌՈՒՄ

Նորություն չէ, որ մայիս ամսի սկզբից աշակերտները մի այլ տրամադրություն են ունենում. դպրոցն ավարտելը և էքսկուրսիաները նրանց սպասած օրերն են: Սակայն այդ էքսկուրսիաներն ուսուցիչը պետք է այնպես կազմակերպի, որ դասանյութին համահունչ լինեն, մանավանդ «Աշխարհագրություն» առարկայի դեպքում, որի անբաժանելի մասն են բնությունն ու նրա հետ կապված երևույթները:

Սեփական օրինակով համոզվելով՝ առաջարկում եմ մինչ էքսկուրսիա գնալը նախապատրաստվել, ինչպես նախապատրաստվում ենք օրվա դասին. դասի անելիքին ու նպատակին:

Քոլատակի միջնակարգ դպրոցի 2017-2018 ուսումնական տարվա 9-րդ դասարանի շրջանավարտներն առաջարկեցին իրենց հետ նշել քննությունների բարեհաջող ավարտը: Առաջարկվեց վայրն ընտրել Քոլատակ գետի ափին՝ անտառի գողտրիկ անկյունը, որտեղ կտրվում ես առօրյա կյանքից:

Առավոտյան շուտ այցելեցի նշված տեղը: Աշակերտներն արդեն կազմ ու պատրաստ տեղում էին [Զանգ]: Բարևեցի, որից հետո թվարկեցինք այն ամենը, ինչ առաջադրված էր էքսկուրսիայի համար [Տնային աշխատանքի ստուգում]: Այնուհետև աղջիկներին հանձնարարեցի նախապատրաստել սեղանի բացումը, իսկ տղաներին՝ փայտ հավաքել կրակ վառելու համար [Աշխատանքի աշխարհագրական բաժանում]: Աշակերտները եռանդով սկսեցին իրենց գործը: Հսկում էի նրանց արածը, միաժամանակ հարցեր տալիս.

- Ո՞ր գետի ափին ենք գտնվում:
- Որտեղի՞ց է սկիզբ առնում:
- Ո՞ր գետի վտակն է:
- Ո՞ր ափն է ավելի քայքայված:
- Ե՞րբ է ավելի արագահոս լինում և այլն:

Աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացավ, ու սկսեցին աշխատել և մեկը մյուսին հարցեր տալ: Իմացողները պատասխանում էին, չիմացողները՝ սովորում:

Գնալով հարցերն ավելի էին շատանում ու իմաստալից դառնում, քանի որ անգամ սեղանին նայելով՝ հարցերն ինքնին առաջանում էին.

- Ո՞րն է կարտոֆիլի հայրենիքը:
- Ո՞րն է թեյի հայրենիքը:
- Ինչպիսի՞ բույս է թեյը:

Որից հետո կազմակերպեցի խաղ անուն, ազգանուն, բույս, կենդանի, պետություն, մայրաքաղաք սխեմայով, ըստ տրված սկզբնատառի:

Օրինակ՝ **Ա** տառ - Անուշ, Աղասյան, արևածաղիկ, անակոնդա, Անդորրա, Անկարա: **Բ** տառ - Բենիկ, Բարսեղյան, բամբակ, բադ, Բոլիվիա, Բեռն և այլն:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի դեպքում մեկ լուցկու հատիկ պիտի տրամադրվեր աշակերտին: Վերջում ում ձեռքին ավելի շատ լուցկու հատիկ լիներ, նա էլ կկոչվեր հաղթող և կպարգևատրվեր ամենահամով ուտեստով:

Խաղը շատ հետաքրքիր էր. յուրաքանչյուրը ջանում էր հաղթել: Այն ընթացավ յոթ շրջապտույտով, որից հետո հաղթողն ստացավ խոստացված նվերը:

Այնուհետև պատմեցինք գյուղի մասին մեր մեծերից լսած պատմություններ ու խմբովի մի քանի հայրենասիրական երգ երգեցինք [Կապն այլ գիտությունների հետ]: Աղջիկներն սկսեցին ծաղիկներ հավաքել ու ծաղկեպսակ հյուսել, իսկ տղաները որոշեցին, թե ով է ավելի գեղեցիկ: Իհարկե, կարծիքները տարբեր էին [Գեղագիտական արժեքի բարձրացում և ճաշակի ձևավորում]:

Արևն արդեն կամաց-կամաց կորչում էր հորիզոնից: Աշակերտներին հանձնարարեցի հավաքել բոլոր իրերը: Գյուղ տանող ճանապարհին էինք, ու նորից սկսեցի հարցեր տալ.

- Ի՞նչ տարբերություններ նկատեցիք անտառի և մեր ներկա պահին գտնվելիք վայրի միջև:

Այս ու այն կողմից լսվեցին պատասխաններ.

- Անտառում ավելի մութ էր:
- Ծառատեսակներն ուրիշ էին, այստեղ թփուտներ են:
- Թափված և չորացած տերևներ կային (լանդշաֆտի տարբերակման ունակություն):

Այդ պահին գալիս էր Ստեփանակերտ-Քոլատակ մարդատար մեքենան: Աշակերտները նորից սկսեցին մեկը մյուսին հարցեր ուղղել.

- Տրանսպորտի ո՞ր ճյուղին է պատկանում:
- Տնտեսության ո՞ր ճյուղին է պատկանում:

Իմ հարցին թե գո՞հ են, արդյոք, իրենց էքսկուրսիայից, բոլորը միաձայն դրական պատասխան տվեցին, որից հետո առաջարկեցի ցրվել քանի դեռ մութը չէր ընկել [Դասի վերջ]:

Աշակերտները հոգնած ցրվեցին, բայց ամեն մեկն իր հետ տանում էր անմոռանալի և չնախատեսված աշխարհագրական փորձ:

Սուսաննա ԱՂԱՍՅԱՆ
Մարտակերտի շրջանի Քոլատակի միջն. դպրոցի աշխարհագրության եւ երաժշտության ուսուցչուհի

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՌՈՒԶԵՌԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

Մայիսը դպրոցական եռուզեռի ամենաբեղուն ամիսն է՝ լի իրադարձություններով և հագեցած միջոցառումների առատությամբ: Սա վկայում է այն մասին, որ խաղաղության քաղցր պտուղները վայելող հաղթանակած հանրապետությունը ծաղկում է՝ կրելով հաղթանակի և խաղաղության բերկրանքը, կյանքի փթթուն օրերի վայելչությունը, և բազմապատկվում է նորափթիթ սերնդի կենսախինդ ավյունը, որով վարակված է հայրենի երկրի ամեն մի անկյուն և, անշուշտ, մեր գողտրիկ բարձունքը՝ Շուշին:

Շուշին, կրելով հաղթանակի բարեբեր պտուղները, ցուցադրում է իր հոգևոր արդյունավետ աշխատանքները՝ ուրախություն պարգևելով և՛ իրենց՝ մատղաշ սաներին, և՛ ուսուցիչներին ու նրանց ծնողներին: Շուշիում և ողջ հանրապետությունում հասակ է առնում նոր սերունդ՝ հայացքներում լուսավոր երազանքներ, համարձակ ու անկախ իրենց հայեցակետերով, վճռականությամբ ու գիտելիքներով փայլող, որ ժամանակի պատեհությունից օգտվելով՝ զինում են իրենց համակողմանի պետքերով, դպրոցում ստանում են գիտելիքներ՝ համալրելով այսօրվա հարուստ աղբյուրներով, արվեստի գործող խմբակներում հարստացնում են իրենց գեղագիտական ճաշակը, սպորտային պարապմունքների շնորհիվ կոփվում ու կերտում ապագա զինվորի արժանի կերպար: Շուշին իր գիտամշակութային արժեքով առանձնահատուկ դեր է ստանձնում Արցախի հոգևոր կյանքում: Այս ամենը լավագույնս դրսևորվում է և Շուշիի, ինչու չէ, հանրապետության ամենամեծ դպրոցներից մեկում՝ Խ.Աբովյանի անվան կրթօջախում: Մայիսյան լեցուն օրերի շղթան խանդավառող միջոցառումների շարքով ստեղծում է մի գեցեցիկ համապատկեր:

Դեռևս մայիսին նախորդող ապրիլի վերջին և մայիսի սկզբին մեկը մյուսին հաջորդեցին այբուբենյան շքահանդեսները 1-ին «ա» (դասվար՝ Սուսաննա Բեգլարյան) և 1-ին «բ» դասարաններում (փոխարինող դասվար՝ Վահիդա Քոչարյան): Շողշողուն մանուկները մանկական կարկաչով են լցնում դահլիճը, ուրախ երգում ու պարում, հրաժեշտի բարեմաղթանքներ են հղում դասվարները, մանկան ժպիտով են ողողվում միջոցառումները և ստեղծում անմոռաց պահերի վառ հիշողություն: Մնում են մնայուն պահերի գեղեցիկ հիշողությունները, լուսանկարները դասվարների, սաների և ծնողների հետ, որոնք կյանքի պատմություն են ստեղծում...

Ուշագրավ միջոցառումները կրում են հաջորդական բնույթ: Մի օրում կայանում են անգամ մեկից ավելի տոնակատարումներ. դպրոցի ներառական խմբի աշակերտների ընդգրկմամբ գեղեցիկ հոգևոր միջոցառումներ են կազմակերպվում բազմամասնագիտական աջակցության թևում՝ զատկական տոնակատարումներով ներառման կարիք ունեցող աշակերտներին մղելով ակտիվության և ունակությունների կիրառման, ազգային արժեքների ճանաչման (կազմակերպողներ՝ Գ.Իշխանյան և Վ.Հակոբյան, Ն.Բալայան, Ա.Հայրապետյան)՝ ամեն ինչ հանուն աշակերտների ուժերի բացահայտման և նրանց ընդգրկվածության օգտակարության:

Մայիսի 2-ին դպրոցի դահլիճում կայացավ ինտելեկտուալ մրցույթ հայոց լեզվից՝ նվիրված Մայիսյան եռատոնին (ուսուցիչ՝ Սուսաննա Ստեփանյան): Ունենալով կողմնորոշիչ խորագիր՝ «Խոհեմ իմաստությամբ կարելի է հաղթել մեծ զորությանը», այն կարևորեց գիտելիքի դերը մարդկության առաջընթացի գործում. գիտելիքն է այն զենքը, որով սերունդները հաղթում են գոյության համառ պայքարում: Մրցույթը ստուգում էր աշակերտների գիտելիքների պաշարը հայրենից՝ միաժամանակ բացահայտելով մասնակիցների գեղագիտական ունակությունները. նրանք հայրենասիրական արտահայտիչ ասմունքով, գեղեցիկ երգերով ու պարերով տոնական տրամադրություն էին հաղորդում մրցույթ-միջոցառմանը՝ դպրոցի տնօրինության կողմից արժանանալով գովեստների ու պատվոգրերի: Վարպետորեն կատարվող երգերը նվիրված էին մեր մարտնչող մարտիկներին, որոնք կռվել ու նահատակվել են մեր խաղաղ կյանքի արշալույսների համար: Նրանց ջանքերով ստեղծված պայծառ հայրենիքում հասակ է առնում գեղեցիկ սերունդ, որ հայրենիք կերտողի ակտիվ մասնակից է:

Մայիսի 11-ին դպրոցի բարձր դասարանցիների մասնակցությամբ կազմակերպվեց ևս մեկ ուշագրավ միջոցառում՝ «Շնորհավո՛ր տոնդ, Շուշի՛» խորագրով (ուսուցիչներ՝ Հերիքնազ Ղաբուլյան և Սահդա Հայրապետյան): Աշակերտները ներկայացրին Շուշիի հաղթանակին հարիր ոգեշունչ միջոցառում՝ վերապրել տալով հաղթանակի բերկրալի թրթիռները:

Մայիսի 15-ին բարեբեր նախաձեռնությամբ Արցախի ավանդական «Տնջրե» ավանդական երգի-պարի համույթի կողմից դպրոցում կազմակերպվեց համագործակցային համերգ-հանդիպում դպրոցի կամարների տակ (գեղեկ՝ Մանուկ Հարությունյան): Հանդիպման նպատակը ազգային երգի ու պարի մասսայականացումն էր: Խմբի ղեկավարը հաղորդում էր երգերի ու պարերի բովանդակությունը, օրինակ՝ «Կարնո քոչարի»-ն պարել են պատերազմի գնալուց առաջ... Աշխատանքային պարերի շարքին է պատկանում Վանա ձկնորսների պարը: Նշվեց, որ հանդիպումը նվիրված է Շուշիի ազատագրման 27-ամյակին: Շեշտվեց նժդեհյան պատգամը, որ խաղաղությունը պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցն է՝ պատրաստվելու պատերազմի, պատրաստվելու ոգեղեն ուժով... Համագործակցության արդյունքում նրանք կատարեցին 6-րդ դասարանի ծրագրով նախատեսված ազգային երգերն ու պարերը, որին մասնակցեցին նաև դպրոցի սաները՝ շուրջպար բռնելով դահլիճով մեկ: Նրանք նշեցին, որ իրենց նպատակային համերգներն իրականացրել են Արցախի մի շարք բնակավայրերում՝ Վանքում, Առաջածորում, Պատարայում, Այգեստանում, Ասկերանում, Իվանյանում, Տողում, Ամարասում, Սոսում, Քաշաթաղում: Պահը տրամադրող էր՝ լցված աղգային երանգներով և հպարտությամբ: Դահլիճում ներկա աշակերտները նրանց հետ երգում էին, շուրջպար բռնում: Երիտասարդ համույթի խանդավառ մասնակիցները և դպրոցի մասնակիցները հավաստեցին միասնության ուժը. բոցավառ կրակներով խանդավառված սրտերն են կերտում հայրենիքի պատկերը և ջերմությամբ համակում ուժով պահելու այն: Վերջում համերգային շուրջպարը փոխադրվեց դպրոցի բակ, որտեղ զուռնա-դհոլի նվագակցության ներքո մեծ շուրջպար բռնեցին բոլորը: Այսպիսի գունեղ ու վարակիչ մթնոլորտն ստեղծում է ազգային կոլորիտ, որը ջերմությամբ է համակում բոլորին. դա՝ հզոր երիտասարդության թարմ ուժերի շնորհիվ, որի ավյունով ու նախաձեռնողականությամբ իրագործվեց գեղեցիկ ծրագիր: Վերջում բոլորը միասին լուսանկարվեցին:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ՊԱՐԱՎԸՔ ԵԿԱԼ

Արցախի Հանրապետության «Կրթության մասին» օրենքը սահմանում է, որ հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստելը: Իսկ արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զար-գացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակաուղղված է նրանց գեղագիտական, հոգևոր, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Շատ խելացի է կատարված դեռահասի՝ դպրոցականի առօրյայի, զբաղվածության հարցերի իրականացումը, ասել է թե՝ նա լիովին գտնվում է պետական հոգածության ներքո: Արտադպրոցական աշխատանքները, լինելով սովորողների ուսուցման և դաստիարակության համակարգի առանցքային բաժիններից, սերտորեն կապված են դպրոցում, բնակության վայրում տարվող դաստիարակչական աշխատանքի հետ, որոնք առանձնահատուկ են իրենց բովանդակությամբ, նպատակով, խնդիրներով, կազմակերպման մեթոդիկայով: Առանձնանում են մանկավարժական մի շարք սկզբունքներով:

Կամավորականության սկզբունք: Այսինքն՝ աշակերտն ինքն է ընտրում պարապմունքի այս կամ այն ձևը, ինչն իրեն հետաքրքրում է:

Հասարակական ուղղվածության սկզբունք: Այն է, որ խմբակների, ակումբների և այլ միավորված խմբերում դաստիարակչական աշխատանքները կրում են հասարակական կարևոր բնույթ, պատասխանում են մի շարք հրատապ հարցերի, կապված են գիտության, տեխնիկայի, մշակույթի նորագույն նվաճումների հետ:

Սկզբունքներից կարևոր են նախաձեռնության և ինքնագործունեության, խաղային ձևերի, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, տեղեկատվությունը, հուզականության իրավիճակները և այլն:

Խորհրդային Միության փլուզումից հետո որոշ ժամանակ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակության հարցերը, որոնցով զբաղված էին պիոներական և կոմերիտական կառույցները, վակուում ապրեցին:

Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնները, «Զարթոնք»-ը եղան այն փրկարար օղակները, որոնք կարողացան դպրոցականների հետաքրքրությունների, նախաձեռնությունների, կարողությունների ուղղորդողները դառնալ:

Նախաբանս երկար ստացվեց: Ուղղակի այսօր ուզում եմ ներկայացնել Ասկերանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի աշխատանքների մասին: Կենտրոն, ուր այցելող ամեն ոք դրական լիցքեր է ստանում՝ ծանոթանալով դպրոցականների, մանկավարժների բազմաբնույթ աշխատանքներին, դիտելով ճաշակով կահավորված անկյունները, արցախյան կոլորիտով բաժինը՝ «Պարավը եկալ» ազդագրով: Կենտրոնի վերանորոգված շենք տեղափոխվելն աշխատանքներին առանձին թարմություն տալու և պատասխանատվության մեծ զգացում է պահանջել կոլեկտիվից:

Օրեր առաջ թոռնիկիս հետ զբոսնելիս մոտեցա կենտրոնի հարևանությամբ ծաղկանոցին: Հեռվից աչքի զարնեցին զարմանալիորեն հաճելի ցուցանմուշները, թեմատիկ գործերը, ու չկարողացանք անտարբեր անցնել: Թոռս համարյա յուրաքանչյուր ցուցանմուշի մոտենալիս հարցնում էր. «Սրանք երեխանե՞րն են պատրաստել»: Շնորհաշատ կոլեկտիվը՝ տնօրեն Մերի Գաբրիելյանի գլխավորությամբ, կլանված է գեղեցիկ գործեր ստեղծելու, կերպարվեստի, պարարվեստի, գորգագործության ուսուցման աշխատանքով: Որքա՜ն հիանալի մտահղացումներ են ձևավորվում այստեղ: Զարմանալ կարելի է, թե շրջապատի հասարակ, առօրյա իրերից ինչպիսի իմաստալից, արժեքավոր գործեր են ստեղծվում: Կենտրոնի 38 խմբակները գործում են 10 համայնքներում, ընդգրկված են 380 դպրոցականներ, գործում են ինչպես ավանդական խմբակներ (երգի, նկարչության, հմուտ ձեռքերի, թատերական, կար ու ձևի), այնպես էլ կոլաժի, կվիլինգի, մաքրամեի, կարպետագործության: Մինչև հունվար գործել են նաև գորգագործության, տրեխագործության, բրուտագործական խմբերը: Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված՝ մայիսի 30-ին շրջկենտրոնում կազմակերպված հաշվետու միջոցառումն ուշագրավ էր ճոխ ծրագրով ու ընդգրկվածությամբ:

Հաղորդավար, կենտրոնի սան Արամ Մինասյանը, ներկայացնելով միջոցառման նպատակը, կարողացավ հյուրերին ներկայանալ պարզ, մատչելի, ազդեցիկ ձայնով ու բեմական կեցվածքով: Պարային խմբերի (Ասկերան-պարուսույց՝ Մերի Գաբրիելյան, Նորագյուղ՝ Թամար Սարգսյան, Իվանյան՝ Ռիտա Բեգլարյան, Այգեստան՝ Նանար Սավադյան) կատարումները հանդիսատեսին հաճելի պահեր նվիրեցին: Նազանք, անկաշկանդ, հոգի, սեր, նվիրում:

Ի դեպ, Նորագյուղի «Նշխար» ազգագրական պարախումբը մասնակցել է ԱՀ ՄԵՀՋ նախարարության կողմից կազմակերպված «Մշակութային խաչմերուկ» մրցույթ-փառատոնին և հանրապետությունում գրավել 2-րդ մրցանակային տեղը:

Ժողովրդական, ազգագրական, հայրենասիրական, մանկական, ժամանակակից պարերը հաջորդում են սահուն, և ծնողները, հյուրերը, հասարակության ներկայացուցիչները միայն կարողացան երեխաներին վարձահատույց լինել բուռն ծափահարություններով: Բեմական հագուստի, տարազի ընտրությունը ևս կատարվել է գրագետ ու ճաշակով՝ ընդգծելով պարի առանձնահատկությունը: Զուգահեռ կատարվում էին ձեռքի, նկարչական և այլ աշխատանքներ:

Հանդիսատեսի, ծնողների անունից շնորհակալություն ձեզ՝ մեր շնորհաշատ, շա՛տ սիրելի երեխաներ: Նաև ձեզ՝ Ասկերանի մանկապատանեկան կենտրոնի խմբակավարնե՛ր, պարուսույցնե՛ր: Դուք հյուսում եք մի գեղեցիկ հեքիաթ, որի գործող անձինք մեր երեխաներն են՝ խանդավառ, անբիծ, զուլալ, ապագայի հանդեպ մեծ հույսերով: Միջոցառմանը առանձին հմայք տվեց ազգային «Խամխամա» պարը՝ որպես վերջին ակորդ: Համեցեք Ասկերանի ՄՊՍԿ և կհամոզվեք ասածներիս ճշմարտացիության մեջ: Ցանկանանք, որ կենտրոն այցելողների ոտքը «պարավ-խերավ ինի»:

Սվետլանա ԱՍՐՅԱՆ
ԱՀ վաստակավոր մանկավարժ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՌՈՒՅԵՌԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

Մայիսի 18-ին դպրոցի դահլիճում տեղի ունեցավ ուշագրավ դաս-վիկտորինա ռուսերենից՝ 11-րդ դ. հումանիտար հոսքի մասնակցությամբ: Ուսուցչուհի, դպրոցի տնօրեն Լիանա Հարությունյանը վիկտորինայի միջոցով տարեվերջյան գիտելիքների ամփոփման յուրօրինակ ստուգատես-բաց դաս էր կազմակերպել, որին մասնակցում էր ավագ օղակի ամբողջ դասարանը՝ բաժանված 2 թիմի՝ "Знатоки" и "Грамотеи": Երեք փուլից կազմված մրցույթն ստուգում էր աշակերտների իմացությունը ռուս գրականությունից, լեզվից և ուղղագրությունից: Փուլերի միջակայքն ուղեկցվում էր գեղարվեստական համարներով: Հնչում էին ռուսերեն երգեր՝ դպրոցական տարիների հետաքրքրությունն արտացոլող, մանկության հեքիաթային ժամանակաշրջանի ուշագրավ երգեր, հիթային համարներ և պարային կատարումներ: Մրցույթն անցկացվում էր "Учеба и труд ведут к победам" խորագրի ներքո: Թիմերն այնքան լավ էին նախապատրաստված, որ դժվար էր նախապատվություն տալ որևէ մեկին: Վերջում աշակերտներն իրենց գոհունակությունը հայտնեցին սիրելի ուսուցչուհուն՝ գիտելիքների պաշարով իրենց զինելու համար:

Մայիսի 17-ին և 20-ին դպրոցում կայացավ հրաժեշտի հեքիաթային շքահանդես 4-րդ «ա» և «բ» դասարանցիների մասնակցությամբ (դասվարներ՝ Գոհար Սարգսյան, Անահիտ Արզումանյան): Թեմատիկ առումով երկու դասարանների ծրագրերն ունեին առնչություններ, բայց յուրովի մեկնաբանությունները հյուսում էր մանկության մոլորակի հեքիաթը: Նախերգանքի պես են բացվում միջոցառումները, որ ուղերձ են՝ հղված հարազատ դպրոցին.

Բարի օր, լույսի դպրոց,
Բարի լուսո, բարին վրադ,
Արեգակի շողը վրադ,
Ծաղկի՛ր, դպի՛ր, երգ ու ծիծաղ՝
Խաղաղության լույսը վրադ:

Տոնահանդեսներն ուղեկցվում են խանդավառ երգերով ու ծափերով և արևի շողերի ջերմություն պարգևում ներկաներին ու վարակում բարձր տրամադրությամբ: Սաները խոսում են հրաշալիքների լեզվով, և փառաբանվում են հայրենի հողը, հայ զինվորը, ճշմարիտ հավատքը, բաղձալի խաղաղությունը, սիրելի մայրիկը, փթթող մանուկները, հարազատ ուսուցիչները, որոնց շնորհիվ երազ երկիրը դարձել է իրական:

Հնչում են նաև արցախյան իմաստախոսություններ և երգեցողություններ.

Այայի երկիր, Արցախ,
Ապան քեզ ինի մատաղ,
Դու աղոթք ես ինձ համար,
Դու հավերժ գանձ ու սար...

Սանիկները հավաստում են հայոց սահմանի պահապան զինվորների արիությունը և կրթվում հայրենյաց ոգով, շեշտում են, որ հավատը բարության առհավատչյան է, խաղաղությունը ամենակարևոր տարրն է հայրենիքի շենացման համար, սիրելի մայրիկն իրենց սնող ամենաջերմ էակն է, իրենք կյանքի բողբոջներն են և սնվում են հոգևոր բարիքներով սրբասուրբ ուսուցիչների միջոցով ու զորանում, հասակ առնում՝ կրթվելով, հարստանալով ու թևավորվելով: Դպրոցը մի մեծ վանք է՝ բյուրավառ ճրագներով, որոնք վառվում են ամեն մի սանի համար... Հոգեեմա ուսուցիչներն են կերտում աշակերտների անապակ հոգին: Ամբողջանում է հրաշալիքը. մանուկները երգերով, պարերով շյուղ առ շյուղ, տող առ տող ավարտին են հասցնում մանկության հրաշքը, որ բարեհաջող հանձնեն տարեվերջյան ստուգումները, փոխադրվեն ավելի հասուն օղակ՝ զինվելու ավելի խոր գիտելիքներով՝ չմոռանալով Մարդ լինելու գեղեցիկ արվեստին իրենց դերակատարումը լավագույնս իրագործել...

Միջոցառումները գեղեցիկ շքերթներ էին՝ հյուսված մանկության և պատանեկության ոսկի հեքիաթներով, մանուկների՝ հրաժեշտի հուզիչ ապրումներով, տոնականության վառ դրսևորումներով...

Մայիսի 21-ին դպրոցում կայացավ ևս մեկ ինքնատիպ միջոցառում-մրցույթ՝ նվիրված հայ մեծ շախմատիստ, աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի ծննդյան 90-ամյակին:

Միջոցառումը բաղկացած էր երկու մասից՝ շախմատի բեմադրված պատմություն և թիմային մրցույթ: Ինչպես շախմատն է հետաքրքիր, այնպես էլ՝ այս միջոցառման ընթացքը: Տրվեց շախմատի պատմությունը: Այն ծագել է Հնդկաստանում 2000 տարի առաջ, ապա տարածվել Արևելյան և Կենտրոնական Ասիայում, հետո՝ Պարսկաստանում: Հայերենում շախմատը կոչվել է ճատրակ: Շախմատն իր ձևով խաղ է, բովանդակությամբ՝ արվեստ, դժվարությամբ՝ գիտություն:

Առաջին մասում հաղորդվեցին հետաքրքիր տեղեկություններ շախմատի աշխարհի մասին, օրինակ՝ Պարսկաստանում շախմատը համարվել է պարտադիր նվեր հարսանիքների ժամանակ: Կամ երբ Նապոլեոն Բոնապարտը աքսորվել էր Սբ. Հելենե կղզի, մտերիմները նրա համար շախմատ ուղարկեցին: Տիրակալը հաճույքով շախմատ էր խաղում՝ չկռահելով, որ խաղաքարերի մեջ բարեկամները փախուստի ծրագիր էին դրել, իսկ բերողը ճանապարհին սպանվել էր... Սա բացահայտվեց 1933թ., երբ կազմակերպվեց Նապոլեոնի իրերի ցուցահանդես:

Միջոցառման երկրորդ հատվածում երրորդ դասարանցիներից կազմված երեք թիմերն սկսեցին պատասխանել ուսուցչուհու՝ Արուս Աթալյանի հետաքրքիր շախմատային հարցերին, որոնց փոքրիկները պատասխանում էին մանկական ինքնաբուխ անմիջականությամբ և տարերային բռնկումով՝ հաճույք պարգևելով ներկաներին:

Մայիսյան դպրոցական ավանդական հուզիչ միջոցառումներից մեկն էլ սփյուռքահայության և հայրենիքի կապի ամրապնդումն է: Արդեն 15 տարի է՝ սերտ համագործակցություն կա Բոստոնի Սուրբ Ստեփանոս վարժարանի և մեր դպրոցի միջև: Հայոց վարժարանը 5-ամյա է, և երբ 5 տարին լրանում է, դպրոցի ուսուցչական կազմը կազմակերպում է ուխտագնացություն դեպի Հայաստան-Արցախ: Ամեն տարի վարժարանի սաներն ուսուցիչների և ծնողների հետ այցելում են մեր դպրոցը, հանդիպում 5-րդ դասարանի սաների հետ, որը հետագայում վերածվում է սերտ բարեկամության: Այս տարի ևս՝ մայիսի 21-ին, այցելեցին դպրոց, և տեղի ունեցավ հուզումնալից հանդիպում: Նրանք իրենց հայրենաբաղձ ասմունքով ու երգերով շատ հուզեցին հինգերորդցիներին: Մեր սաների կողմից հնչեցված երգերում ու ասմունքում կար վեհության, խիզախության արտացոլում, խաղաղության բաղձանք (ուսուցիչ՝ Հասմիկ Ավանեսյան): Անմոռաց է և տիկին Արտեմիսի՝ պատվիրակության ներկայացուցչի խոսքը: Տիրում էր ոգեղեն մթնոլորտ: Վերջում բոլորը միասին շուրջպար բռնեցին դպրոցի ընդարձակ բակում:

☞8

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՑԱԽԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 13-ին Ստեփանակերտում կայացավ ծանրամարտի բաց առաջնություն, որին մասնակցում էին ծանրամարտի ասոցիացիայի մարզիկները մայրաքաղաքի եւ Շուշիի մասնաճյուղերից: Երկամարտում իրենց կարողությունները փորձեցին 21 ծանրամարտիկներ տարբեր տարիքային կարգերում (մասնակցում էին 2002-ից մինչեւ 2011 թվականը ծնված մարզիկներ): Մրցավարական կազմը համալրում էին մարզիկ Ալեքս Աբրահամյանը, մարզիչ Արթուր Նահապետյանը: Գլխավոր մրցավարն էր ասոցիացիայի նախագահ Արթուր Շիրինյանը:

Առաջնությանը ներկա էին սպորտի ոլորտից ներկայացուցիչներ, ծնողներ, մարզիկներ, մարզասերներ:

Արցախցի մարզիկները մոտ մեկ ամիս առաջ էին մասնակցել Վանաձորում կայացած ծանրամարտի առաջնությանը եւ լավ արդյունք դրսեւորել: Իսկ այս առաջնությունում մարզիկներից շատերը գերազանցեցին այդ արդյունքը՝ արձանագրելով 8 առաջին, 6 երկրորդ եւ 6 երրորդ մրցանակային տեղեր: Մարզիկները պարգեւատրվեցին մեդալներով ու պատվոգրերով: Գլխավոր մրցավարը գոհ էր մարզիկների արդյունքներից: Ուշագրավ էր ծանրորդուհի Յուլյա Շիրինյանի, որն ընդամենը յոթ տարեկան է, գրանցած արդյունքը: Երկամարտի հրում (18կգ) եւ պոկում (18կգ) վարժություններում բարձրացնելով 36կգ՝ Վանաձորի առաջնության արդյունքը գերազանցել է 8կգ-ով:

Մարզիչ Արթուր Նահապետյանը մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ կարեւորեց ծանրամարտի դրական ազդեցությունը մանկապատանեկան հասակի մարզիկների առողջության վրա: Նրա խոսքով՝ սպորտում առաջնայինը ֆիզիկական վիճակի բարելավումն է, առողջ մարզիկներ դաստիարակելը: Առաջնության նպատակը ծանրամարտ մարզաձեւի զարգացումն ու մասսայականացումն է Արցախում, մարզիկների մարզական մակարդակի բարձրացումն ու սկսնակ մարզիկների ուղղորդումը դեպի մարզական ռեկորդներ: Ծանրամարտի մարզիկները հաճախակի են մասնակցում Արցախի եւ ՀՀ առաջնություններին, դրսեւորում լավ ցուցանիշներ: Առաջիկայում ՀՀ մարզային առաջնությունն է, որին կմասնակցեն նաեւ արցախցի ծանրամարտիկները:

Արցախի ծանրամարտի ասոցիացիայի նախագահ Արթուր Շիրինյանի ջանքերով վերանորոգվել է ծանրամարտի մարզադահլիճը, Արցախում մարզաձեւի զարգացման ուղղությամբ կատարվել են այլ աշխատանքներ: Ունեցած ավանդի եւ նվիրված աշխատանքի համար Ա.Շիրինյանին Արցախի ծանրամարտիկների կողմից շնորհվեց շնորհակալագիր:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԱՏԵ ԴՈ ՄԱՐՏԱՐՎԵՍՏԻՆ

Մայիսի 29-ին Ստեփանակերտի «Արմատներ» կենսակենտրոնում կազմակերպվեց «Ավանդական կարատե դո մարտարվեստի դերն ու նշանակությունը մարզվողների հոգեբանական եւ ֆիզիկական զարգացման գործում» թեմայով դասախոսություն, նեբառված ավանդական կարատե դո մարտարվեստին վերաբերող թեմաների շուրջ հարց-քննարկում: Այն վարեց Ավանդական կարատե դո ֆեդերացիայի մարզիչ սեւ գոտի երրորդ դան Տիգրան Գեւորգյանը: Դասախոսության նպատակն ավանդական կարատե դո մարտարվեստը որպես առողջ ապրելակերպի առաջատար տարր ներկայացնելն էր, ինչպես նաեւ դրա առանձնահատկությունները վերհանելն այլ մարզաձեւերի համեմատ:

Ներկա էին Արցախում գործող տարբեր կազմակերպությունների անդամներ, այդ թվում՝ կրթության, սպորտի, առողջապահության, ոստիկանության ոլորտների ներկայացուցիչներ, մարտարվեստների երկրպագուներ:

Ավանդական կարատե դո մարտարվեստի փիլիսոփայությունն ու սկզբունքներն ընդգրկում են շատ ավելի լայն ոլորտ եւ միտված են ֆիզիկապես, հոգեպես եւ մտավոր կատարյալ ընդունակությունների տեր մարդ ձեւավորելուն: Ուստի ներկաներն առիթ ունեցան վերհանելու իրենց կողմից ներկայացվող բնագավառների եւ մարտարվեստների միջեւ եղած անմիջական կապը, ամրապնդելու յուրաքանչյուր անհատի համար առողջ ապրելակերպի՝ մարտարվեստի կարեւոր ու անհրաժեշտ լինելու գիտակցումը:

Դասախոսության ժամանակ Տ.Գեւորգյանը կանգ առավ հիմնականում երեք կետերի վրա: Սկզբնամասում ներկայացրեց Ավանդական կարատեի ծագման պատմությունը: Անդրադարձավ ուսումնական ծրագրին եւ մեկնաբանեց որոշ սկզբունքներ: Այնուհետեւ բացատրեց մարզվողի համար մտքի եւ շնչառության ճիշտ օգտագործման կարեւորությունը:

Կարատեն շուրջ 500-600 տարվա պատմություն ունի: Չնայած այն ճապոնական մարտարվեստ է, բայց սկզբնաղբյուրները գալիս են Եգիպտոսից, Հնդկաստանից, Չինաստանից, Օկինավայից եւ վերջում՝ Ճապոնիայից: Օկինավյան մարտարվեստների վարպետ Մացումուռայից փոխանցվելով սերնդեսերունդ, գտնելով արժանի շարունակողներ, որոնք չեն աղավաղել ավանդական կարատեի ավանդույթներն ու սկզբունքները՝ այն հասանելի է դարձել նաեւ մեր օրերում: Ինչպես նշում է Տ.Գեւորգյանը, մեզ բախտ է վիճակվել սովորել ավանդական կարատեն դրա փոխանցողների 5-րդ սերունդը հանդիսացող վարպետ, աշխարհի ավանդական կարատե դո ֆեդերացիայի նախագահ սեւ գոտի ութերորդ դան Վլադիմիր Կվիչինսկու վարպետական դասերից, որն այժմ էլ շարունակում է վարպետաց դասեր անցկացնելու նպատակով տարին մեկ անգամ գալ ՀՀ: Կարատեն նախատեսված էր հակառակորդին մեկ հարվածի ուժով վնասազերծելու համար՝ օգտագործելով նրա խոցելի կետերը: Ուսուցման մեթոդներ մշակելով՝ մերօրյա մարզիչները, գիտակցելով տվյալ մարտական արվեստի լրջությունն ու վնասվածքավտանգ լինելը, տեխնիկան մարզիկներին փոխանցում են փուլերով. միայն հասուն տարիքում են սկսում բացահայտվել մարտարվեստի իրական գաղտնիքները: Սովորեցնելով առաջին քայլերը կարատեում՝ մարզիչները նրանց միաժամանակ պատրաստում են մտավի եւ հոգեբանորեն: Առանց դրա մարտարվեստը վեր կածվի գռեհիկ եւ արյունարբու պայքարի: Ավանդական կարատեն լրիվությամբ յուրացնելու համար պահանջվում են երկար տարիներ ու տքնաջան աշխատանք: Ճիշտ շնչառությամբ կատարված ցանկացած շարժում հասնում է իր նպատակին: Պարբերաբար կատարվող այդ շարժումներն օգնում են ներդաշնակ լինել, ընդորում՝ ունենալ ներդաշնակ ներքին աշխարհ եւ արտաքին տեսք: Միայն երկար տարիների մանրամասն պարապմունքն է տալիս ցանկալի արդյունք՝ ոչ միայն չվնասելով առողջությանը, այլեւ կոփելով ու առողջարար լինելով դրա կարիքն ունեցող մարզիկների համար:

Մարզիչն օրինակներ է բերում եւ ցույց տալիս ներկա գտնվող իր սաներից մեկի վրա, որն ավելի պատկերավոր էր դարձնում դասախոսությունը: Դասախոսությունը եզրափակվեց թեմայի շուրջ հարց-քննարկումներով:

Օգտվելով հնարավորությունից՝ մարզիչ Տ.Գեւորգյանից տեղեկություն ստացանք իրենց ֆեդերացիայում վերջերս արձանագրված մարզական հաջողություններից: Ապրիլին արցախցի մարզիկները մասնակցել են ՀՀ աշխարհի ավանդական կարատե դո առաջնությանը, որտեղ հանդես են եկել հաջողությամբ: Մարզիչը գոհունակությամբ նշեց, որ Ասկերանում պարապող իր սաները հինգ տարվա մեջ առաջին անգամ մասնակցեցին եւ մրցանակային տեղեր զբաղեցրին ՀՀ առաջնությունում: Ունեցան մեկ առաջին, մեկ երկրորդ տեղ գրաված մարզիկներ, իսկ Իվանյանի համայնքում կոփվող սաներից մեկն արժանացավ երրորդ տեղի: Առաջնությունում մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկները մայիսին մասնակցեցին Ավանդական կարատե դո Արարատի գավաթի միջազգային առաջնությանը, որին մասնակցում էին ՌԴ-ն, Լեհաստանը, Իսրայելը ներկայացնող մարզիկներ: Մայիսի 1-4-ը մարզիկները մասնակցել են Աշխարհի ավանդական կարատե դո ֆեդերացիայի նախագահ սեւ գոտի ութերորդ դան Վլադիմիր Կվիչինսկու սեմինար մարզումներին եւ հանձնել գոտու որակավորման քննություն: Սեմինար-հավաքը նպատակ ունի բարձրացնել մարզիկների կրթական եւ ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: ՀՀ-ում Վ.Կվիչինսկու վարած սեմինարին մասնակցել են մարզիկներ ինչպես վերոնշյալ պետություններից, այնպես էլ ՀՀ մարզերից: Արցախցի հինգ մարզիկ հաջողությամբ հանձնել են առաջին դան սեւ գոտու քննությունը: Տիգրան Գեւորգյանը ՀՀ առաջնության կումիտե մրցաձեւում դարձել է չեմպիոն, իսկ Արարատի գավաթի առաջնության՝ կումիտե մրցաձեւի 3-րդ մրցանակային տեղի մրցանակակիր:

Ավանդական կարատե դո մարտարվեստում մրցագորգի վրա պայքարելիս հաշվի չի առնվում մարզիկի քաշային կարգը: Այստեղ գործում է այն սկզբունքը, որ զարգացնելով իր տեխնիկական կարողությունները՝ մարզիկը կարող է հաղթել իրենից առավել լավ ֆիզիկական վիճակում գտնվող մրցակցին: Այս սկզբունքը համընկնում է իրական կյանքում հանդիպող անխուսափելի մարտերի դաժան կանոններին: Չէ՞ որ իսկական մարտիկը նա է, ով պատրաստ է ամեն պահի, եւ նրան հայտնի չէ, թե ով, իսկ հաճախ էլ՝ ովքեր կլինեն նրա մրցակիցները:

Առջեւում Ավանդական կարատե դո Եվրոպայի առաջնությունն է: Ավանդական կարատե դո ֆեդերացիայի մարզիկները պատրաստվում են մասնակցել հոկտեմբերի 7-13-ը Մոսկվայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ

96 տարիների դարակազմիկ կյանք ապրած ուսուցչուհին՝ Գալյա Բադասյանը, վերջին հոգեվարքում արցունքն աչքերում՝ ասաց հոգեզավակ Ղարիբ Բադասյանին. «Բա գրքերս, Ղարի՛բ»:

Տասնամյակներ Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում հայոց լեզու և գրականություն դասավանդած դարի ուսուցչուհին հավաքել էր գեղարվեստական ու մասնագիտական գրականություն՝ իր կյանքի ու գործի հարստությունը. ինչպե՞ս վերջին պահին ցավով չնայեր գրադարակներից ասես էլի ցավով իրենց սիրեցյալին հրաժեշտ տվող գրքերին, որոնք շատ երկար տարիներ նրան ուղեկցել են գրի, գիտության լույսը աշակերտների հոգում սերմանելիս: Եթե մարդու արարած բարձրագույն արժեքը գիրն է, ապա նրա տիրակալն էլ ուսուցիչն է, որը տնօրինում է դպրոցական կրթական գործը, որն էլ ամենաանհրաժեշտ մասնագիտությունն է մեր կյանքում: Գալյա Բադասյանն ուսուցիչ մասնագետ էր բառիս լիարժեք իմաստով, բոլորովին ոչ մեկը այն սնամեջ որակումներով, որոնք առատորեն վերագրվում են շատերի, ովքեր դրանց են միայն արժանի: Անձամբ լինելով նրան աշակերտած մեկը հետպատերազմյան տարիներին, 5-10-րդ դասարաններում, այնուհետև Երևանի պետական համալսարանում՝ զգացի, թե ինչ է դպրոցում ստացած գիտելիքը:

Առանց ընկեր Բադասյանի ավանդած հայոց լեզվի քերականական խորքային համակարգի հեշտ չէր լինելու բարձրագույնի պահանջներին գրագիտորեն հարմարվելը:

Հիշում եմ՝ մեր կուրսեցիներից քանի՞սը ընկրկում էին, քանի որ նրանց դասավանդողները չեն ունեցել իմի պատասխանատվությունն ու պատրաստվածությունը:

Գալյա Բադասյանի բարձր արժանիքը ինքն իրենից հետ չմնալն էր: Եթե ինքնակրթությունը մինչև կյանքի վերջն անգամ անպակաս է մարդու գործունեությունից, նա՝ այդ մասնագետը, լինելու է ստեղծագործող անհատ, որպիսին ինքն էր՝ բարձունքի ձգտող, ինքնակատարելագործվող, իր աշակերտին միշտ հաղորդակից: Դա էր ուսուցչուհուս նվիրական նպատակը, մնացածը՝ այն տարիների աղքատությունն ու դժվարությունները, չէին խոչընդոտելու ձգտելու սրբազան իր երազանքին՝ հարուստ դասավանդմանը: Հրաժեշտն էլ իր արժանիքներից բխածն էր երախտագետ դպրոցական ողջ կոլեկտիվի՝ ուսուցչության ու աշակերտության արցունքով ու ծափողջույնով ուղեկցելն էր:

Ներկա էին Հադրութի շրջժողկրթբաժնի պատասխանատուները, Երևանից, Ստեփանակերտից, հարևան գյուղերից բազում ժամանածներ, որոնք խորին հարգանքի զգացումով ուղեկցեցին ընկեր Բադասյանի հուղարկավորությունը: Հայրենի հողի ծոցը գնաց մեկը, ով արցախյան ավանդական լիարժեք կերպար էր, ժողովրդական գործի համար կոչվածը: Հայոց դարավոր իմաստուն խոսք կա՝ «Բազում են շնորհյալները, սակավ՝ կոչվածները»: Ինքը վերջիններից էր:

Հավերժի ճամփորդ դարձած Գալյա Բադասյան մանկավարժի խոսքն ու գործը մնայուն կլինի սերունդների հիշողություններում:

Երախտապարտի հիշողությամբ՝
Արտաշես Դահրիյան
Հադրութի շրջանի վարչակազմի
աշխատակազմի կրթության
և սպորտի բաժին

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԳԻՐԸ ՄՆԱՑ ՀԻՇԱՏԱԿՈՂ



Եվս մի լուսավոր և պայծառ անձնավորություն հեռացավ Արցախ աշխարհից: Կյանքին հրաժեշտ տվեց ճանաչված մտավորական, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, պատմաբան, հրապարակախոս Միքայել Բախշիի Աղաջանյանը, որի անունն ու գործունեությունը անխզելիորեն կապված են դպրոցաշինության, կրթական համակարգի զարգացման, մատաղ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության հետ:

Միքայել Աղաջանյանը ծնվել է 1929թ. ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: 1946թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ավարտելուց հետո որպես պատմության ուսուցիչ աշխատանքի է անցել Ադր. ԽՍՀ Կուտկաշենի շրջանի Ամիրավան գյուղի դպրոցում: 1950-1953թթ. ծառայել է խորհրդային բանակում: Երկար տարիներ դասավանդել է Մարտակերտի շրջանի Լյուլլասազ (այժմ՝ Վարնկաթաղ) և հայրենի Հաթերք գյուղի միջնակարգ դպրոցներում՝ հեռակա կարգով ավարտելով Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1958-1965թթ. առաջ է քաշվել կոլտնտեսության նախագահի տեղակալի, ապա՝ կուսկազմակերպության քարտուղարի պաշտոնում, իսկ 1965-1975թթ. Հաթերքի «Նոր կյանք» կոլտնտեսության վարչության նախագահ էր: 1975-ին, վերստին վերադառնալով մանկավարժական աշխատանքի, պատմություն է դասավանդել հայրենի գյուղի դպրոցում: 1983-1995թթ. որպես տնօրեն գլխավորել է կրթօջախի կոլեկտիվը: Երկարատև անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Ուր էլ որ աշխատել է Մ.Աղաջանյանը, աչքի է ընկել կազմակերպչական մեծ ունակություններով և մարդկանց համախմբելու, նրանց հետ հարաբերվելու բացառիկ կարողությամբ ու շնորհքով՝ միշտ բարձր պահելով մտավորականի իր նկարագիրը: Նրան ամենուր վստահել ու հավատացել են:

Միքայել Աղաջանյանի անունն ընթերցողներին հայտնի է «Խորհրդային Ղարաբաղ» («Ազատ Արցախ»), «Լուսարար», «Եղիցի լույս» թերթերում հրատարակած նրա ակնարկներից ու դիմանկարներից, գիտամանկավարժական հոդվածներից:

Լինելով պատմության հիանալի մասնագետ՝ Մ.Աղաջանյանը զբաղվել է Արցախի, հարազատ ծննդավայրի գիտական ուսումնասիրությամբ: Նրա տքնաջան, եռանդուն աշխատանքի և ուսումնասիրությունների արդյունք են նրա հեղինակած «Հաթերքի քաջարի զավակները», «Հաթերք. պատմությունը՝ հնադարից մինչև մեր օրերը», «Բնօրրան Հաթերք» և այլ գրքեր, որոնք բարձր գնահատանքի են արժանացել ինչպես ընթերցողների, այնպես էլ ճանաչված գրողների ու գրականագետների կողմից:

«Զագլիկի անմահները» գիրքը, որը յուրահատուկ հուշարձան է Արցախյան ազատամարտում նահատակված զագլիկցիների հիշատակին, ավելի է խտացնում մեր պատկերացումները վաստակաշատ մանկավարժի ու մտավորականի դիմագծի մասին: Այն ընթերցելուց վերստին համոզվում ենք, որ Մ.Աղաջանյանն իր հող ու ջրի, իր Արցախ երկրի նվիրյալ զավակն է, նրա ճակատագրով մտահոգ ու լավատես, պատմական և հոգևոր արժեքների հանդեպ՝ զգայուն, դիտարկումներում՝ ազնիվ ու անաչառ:

Քաջատեղյակ լինելով բնակավայրի պատմական անցքերին ու իրադարձություններին, ժողովրդի ավանդույթներին՝ Մ. Աղաջանյանը մանրակրկիտ ուսումնասիրել ու բավականաչափ նյութ է ժողովել իր գրքի համար՝ հաղորդակցվելով դեպքերի անմիջական ականատեսների ու մասնակիցների, հերոսների հարազատների, մարտական ընկերների ու հրամանատարների հետ, նկարագրել Զագլիկի կամավորական ջոկատի անցած ճանապարհը, ստեղծել զոհված մարտիկների դիմանկարները:

«Բնօրրան Հաթերք» գրքում հեղինակը որդիական անկեղծ սիրով ու հպարտությամբ է խոսում հարազատ ծննդավայրի, նրա նշանավոր մարդկանց մասին, անդրադառնում գյուղի փառահեղ անցյալին ու ներկային, ընթերցողներին աղբյուրագիտական հարուստ նյութ հաղորդում՝ ուղղորդելով նրանց փնտրտուքների և որոնումների, դեգերումների և քաղցր տառապանքների ճամփաներով, որոնք տանում են դեպի հավերժություն:

Հազարամյակների տարեգրություն ունեցող Հաթերք բնակավայրի պատմության, նրա ստեղծագործ ու աշխատասեր ժողովրդի սխրագործությունների, թշնամու դեմ մղած անզիջում պայքարի, զորեղ կամքի և հայրենասիրության մասին հայ պատմիչներն և գրողներն անդրադարձել են իրենց աշխատություններում ու գրքերում: Այդ արժեքների պահպանմանն ու զարգացմանը միտված ձեռնարկումները ամենատարբեր ձևաչափերով շարունակել են և հետագայում: Նման առաքելություն ստանձնած անձանցից մեկն էլ Միքայել Աղաջանյանն է, որն ուսումնասիրել և գրի է առել հարազատ գյուղի պատմությունը հին ժամանակներից մինչև մեր օրերը՝ փորձելով կորստից փրկել ազգապահպանման համար այնպիսի շահեկան շերտեր ու բաղադրիչներ, որոնք առօրյա կյանքում ուղեկցում են մարդկանց: Դրանք մասնավորապես առնչվում են ամենատարբեր իրավիճակներում (կենցաղում) ժողովրդական ավանդույթների և սովորությունների պատշաճ դրսևորմանը, տոհմի ժառանգականության պահպանմանը: Ընթերցողի սեղանին դնելով «Հաթերք. պատմությունը՝ հնադարից մինչև մեր օրերը» ստվարածավալ գիրքը, որը երկար որոնումների և գիտական ուսումնասիրությունների համառ ու տքնաջան աշխատանքի արդյունք է, Մ.Աղաջանյանն իր առջև դրված աստվածահաճո այդ առաքելությունը կատարել է պատվախնդրորեն, հարազատ զավակին վայել սրտացավությամբ ու մաքուր խղճով՝ սերունդներին կտակելով արժեքավոր մի այնպիսի աշխատություն, որն իրապես հնամյա և նորօրյա Հաթերքի անձնագիրն է:

Բազում անքուն և անհանգիստ գիշերներ է նա լուսացրել՝ թղթին հանձնելով ժողովրդի ազատագրական պայքարի ուշագրավ դրվագները, գյուղի, նրա բարի ու աշխատասեր, ավանդապահ մարդկանց մասին պատմություններն ու զրույցները՝ տեսադաշտից դուրս չթողնելով նաև ժողովրդական բանահյուսության գոհարները՝ զվարճախոսություններ ու սրամտություններ, հանելուկներ ու ասացվածքներ, իմաստախոսություններ՝ փրկելով դրանք մոռացության փոշուց:

Լինելով պատմության հրաշալի գիտակ, ունենալով հարուստ կենսափորձ, երկար տարիներ դասավանդելով դպրոցում և կրթելով մատաղ սերնդին, իսկ հետագայում որպես տնօրեն գլխավորելով կրթօջախը, ինչպես նաև պատկառելի մի ժամանակահատված հանդիսանալով գյուղի կոլտնտեսության ղեկավարը՝ հասարակության հետ ակտիվ շփումները նրան հնարավորություն են տվել լավ ճանաչել մարդկանց, ըմբռնել նրանց հոգեբանությունը, քաջատեղյակ լինել ժողովրդի խնդիրներին ու մտահոգություններին: Եվ որպես խորհրդատու փորձելով նեցուկ կանգնել գյուղացիներին (տարիքն ու վաստակը բարոյական այդ իրավունքը նրան ընձեռել են)՝ Մ.Աղաջանյանը յուրաքանչյուրի հետ հավասարապես տագնապել ու տառապել է գյուղի ճակատագրի համար՝ ապավինելով իր հերոսական ժողովրդի անսասան կամքին ու իմաստնությանը, բազկի հզորությանը…

«Թմանանց տոհմածառը» Մ.Աղաջանյանի չորրորդ գիրքն է, որ ներկայացվում է ընթերցողներին: Այն երկար որոնումների և ուսումնասիրությունների համառ տքնանքի և բացառիկ աշխատասիրության արդյունք է, որ ծնունդ է առել իրողությունների և ճշմարտության լույսի ներքո՝ արժևորելով անցյալն ու ներկան, լավատես մնալով գալիքի նկատմամբ: Ավելի քան 5 հազար սերունդ է «ժողովված» ապուպապերի մասին պատմող գրքի մեջ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նկարագիրը, երևույթների նկատմամբ սեփական աշխարհընկալումը:

Լինելով Թմանանց տոհմի արժանավոր ժառանգներից մեկը՝ հեղինակը համոզիչ ու հիմնավորված տեղեկություններ է հաղորդում նրանց մասին, պատկերավոր նկարագրում ժամանակաշրջանը, տոհմածյուղերի միջև կապը, բնավորություններն ու նախասիրությունները, նրանց դերը հասարակության կյանքում:

Թմանանց տոհմը տվել է ճանաչված մարդիկ՝ գիտնականներ, բժիշկներ, արվեստի և մշակույթի, պետական ու ռազմական գործիչներ, հմուտ արհեստավորներ, որոնք միշտ բարձր են պահել ծննդավայրի անունն ու պատիվը:

Բազում տարիներ կրթելով ու դաստիարակելով սերունդներին, ղեկավարելով հարազատ կրթօջախը՝ նա չի խնայել հոգու ջերմությունն ու սերը՝ լիառատ բաշխելով աշակերտներին: Նա հրաշալի գրքեր է գրել Արցախի, հայրենի ծննդավայրի, նրա մարդկանց մասին, որոնք մնայուն արժեքներ են: Եվ գիրը մնաց… հիշատակող:

Տասնյակ սերունդներ են կրթվել ու դաստիարակվել Միքայել Աղաջանյանի իմաստուն պատգամներով ու խորհուրդներով: Նրանցից շատերն այսօր Արցախյան ազատամարտի հերոսներ են, ոմանք զորավարներ, ճանաչված գիտնականներ, պետական, քաղաքական գործիչներ, անվանի մանկավարժներ, արտադրության հմուտ կազմակերպիչներ:

Ազնիվ ու առաքինի, շիտակ ու բարի մարդու՝ հայրենիքի արժանավոր զավակ Միքայել Աղաջանյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Դավիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Շուշիի մտավորականությունը ծանր կորուստ կրեց. կյանքի վաթսունվեցամյակը դեռ չբոլորած՝ հավիտենության ուղին բռնեց լավագույն մանկավարժներից մեկը՝ մաթեմատիկայի բազմավաստակ ուսուցչուհի Անուշ Աշոտի Ավետիսյանը: Մարդ, որ իր ողջ կյանքը նվիրաբերել է մատաղ սերնդի կրթության վեհ գործին:

Անուշ Ավետիսյանը ծնվել է 1953թ. դեկտեմբերի 5-ին ԼՂ Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղում՝ ծառայողի ընտանիքում: Գերազանց գնահատականներով ավարտելով գյուղի դպրոցը՝ 1971-1977թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժնում, որն ավարտելուց հետո մանկավարժական գործունեություն է ծավալել Քոլատակում, Առաջաձորում, Ստեփանակերտի հ.10 միջնակարգ դպրոցում:

Շուշիի ազատագրումից հետո՝ 1993թ. ընտանիքով տեղափոխվում է ազատագրված քաղաքը և երկար ու ձիգ տարիներ՝ մինչև թոշակի անցնելը, իր մանկավարժական անբասիր գործունեությունը ծավալում Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

Անուշ Ավետիսյանը վերին աստիճանի կազմակերպված, բարեխիղճ ուսուցչուհի էր: Նա օժտված էր մանկավարժին բնորոշ լավագույն գծերով, պատասխանատու էր իրեն վստահված բոլոր գործերում, աշխատասեր էր, սկզբունքային, լավագույն դասղեկ էր, ամեն ինչ անում էր մեծագույն խնամքով, ուստի և վայելում էր մանկավարժական կոլեկտիվի սերն ու համակրանքը: Նա երիտասարդ մանկավարժների համար լավագույն օրինակ էր. ամեն ինչ անում էր տակտով՝ լինի գովեստ, թե դիտողություն:

Երիտասարդ ուսուցիչները նրանից սովորելու շատ բան ունեին: Նա ասում էր, որ եթե աշակերտներին տրված թեմատիկ գրավորը չի ստուգվում երեք օրում, և պատասխանները չեն հայտնվում նրանց, այդպիսի գրավորը երբեք օգուտ չի բերի սովորողին:

Աշակերտների հանդեպ վերաբերմունքը խիստ էր, հետևողական, արդարացի, նաև բարեհամբույր էր և միջամտող: Ահա ինչու իր սաների սիրելին էր Անուշ Ավետիսյանը: Նա ուներ աշակերտների մեծ հետևորդներ, որոնց համար իրենց դասղեկը և ուսուցիչն առանձնահատուկ էր: Իր սաների համար նա մեծ կերպար էր, նրա բոլոր դասերը բաց դասեր էին: Դասալսողները հիացմունքով էին խոսում նրա մասին:

Անուշ Ավետիսյանը կարողանում էր լեզու գտնել ամենաբարդ աշակերտի հետ: Նրա մանկավարժական գործունեության առանձնահատկությունը յուրօրինակ դիվանագիտություն էր. երբեք չէր վիրավորում աշակերտին, գնահատում էր նրա արժանիքները և ի վերջո հասնում նպատակին. շտկում էր աշակերտի վարքը:

Զարմանալի է, թե ինչպես էր ներդաշնակում իր փոքրիկ մարմնի կարողությունները և մանկավարժական հմտությունները: Հաճախ ճիշտ խորհուրդներ էր տալիս սկսնակ մանկավարժներին: Նա գնահատում էր ամեն լավը, դրականը: Ուներ կազմակերպչական ջիղ, ճիշտ եզրակացություններ էր անում, ուստի և դպրոցում մեծ հեղինակություն էր վայելում: Երկար տարիներ եղել է դպրոցի արհմիութենական կոմիտեի նախագահը և բարեխղճորեն կատարել այդ պարտականությունը:

Իր ունեցած վաստակի համար Անուշ Ավետիսյանը բազմիցս արժանացել է կրթության ոլորտի բազմաթիվ պատվոգրերի, իսկ մի քանի տարի առաջ՝ ԼՂՀ «Երախտագիտություն» մեդալին:

Անուշ Ավետիսյանի հիշատակը վառ կմնա դպրոցի ողջ մանկավարժական կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի, իր սաների, նրան ճանաչողների սրտերում:

Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան
միջնակարգ հոսքային դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ՈՒՍՏԱՐԻ. ՀԱՎԱՐՏ

ՄԻՇՏ ՄԵԶ ՀԵՏ, ՄԻՇՏ ՄԵՐ ՄԵՋ

Մեր թռիչքը Հ. Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել»

Ավ. Իսահակյան

- Կա Մեծարենց, կա Տերյան,
Եվ բազում ուրիշ պոետներ կան,
Բայց Թումանյանն է անհաս Արարատը
Մեր նոր քերթության...

Ե. Չարենց

Այսպիսի փառահեղ գնահատականի կարող է արժանանալ միայն այն մարդը, ով իր լուսավոր ու իմաստուն կյանքն անմնացորդ նվիրաբերեց իր ազգին ու դարձավ Մարդու բարեկամն ամեն տարիքում՝ բոլոր ժամանակների համար...

Ի սկզբանե նա հասկացել էր, որ ինքն աստվածակոչ բանաստեղծ է.

- Իմ կընունքին երկինքը ժամ, արևը՝ ջահ սրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կընքահայրը, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կընքողը Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Եվ իրեն տված ինքնագնահատականը հավետ դաջվեց հայ ազգի անմահ մշակույթի ոսկե վահանակին՝ Ամենայն հայոց բանաստեղծ:

2019թ. ամենուր բարձր մակարդակով Անմահ Լոռեցու 150-րդ տարեդարձը նշում են մեծ ոգևորությամբ: Մարտունու հ.1 դպրոցում այդ կապակցությամբ կազմակերպվեց ցերեկույթ: Հրավիրված էին քաղաքի կրթօջախներից ուսուցիչներ, աշակերտներ, մշակույթի աշխատողներ:

Բեմահարթակը կահավորված էր նահապետական գյուղի պատկերներով ու կենցաղային իրերով, առարկաներով, ծառ ու ծաղիկներով: Այդպես հայ հին գյուղի հարազատ մի մասունք էր աչք շոյում միջոցառման սկզբից մինչև վերջ, ամբողջ ընթացքում բոլորին պահում մեծ բանաստեղծի ապրած գյուղի, նրա հոգեհարազատ կենցաղի ու գույների հետ:

Միջոցառման ողջ ընթացքում, ըստ կահավորության, Հայաստանի, մասամբ Լոռվա և Դսեղի ու Ջավախքի հիշարժան բնապատկերներն էին իրար հաջորդում բեմի էկրանին: Սա ավելի կենդանի ու համոզիչ էր դարձնում այն ամենը, ինչ ասվում ու ներկայացվում էր միջոցառման մասնակիցների կողմից. ծաղկաքաղով ներկայացվեց բանաստեղծի գրական ժառանգությունն ամբողջապես: Շնորհալի աշակերտներն իրենց հուզական խոսքով կարողացան ունկնդիրներին տեղափոխել թումանյանական աշխարհ: Ու աննկատ ընկղմվեցինք աստվածային հոգու տեր այդ մարդու նրբագույն ու սուրբ զգացմունքների, հոգու տվայտանքների, բնության գեղեցկության ու եթերային գաղտնիքների, ժամանակի իրարամերժ հակասությունների, պատմական դաժան զարգացումների և հայ ժողովրդին պատուհասած գեհենային ճակատագրի մի աշխարհ:

Իսկ այդ դիվային իրականության մեջ այս աստվածակոչ հանճարը կարողացավ մնալ մեծ ու հոգածու բոլոր մարդկանց, իր ազգի համար՝ նվիրյալ: Եվ դժոխային պայքարում նա սպառվեց թռչողանցնող օրերի հևքով, սպառվեց լույս տալով:

Պատահական չի ասված, որ հայ ժողովուրդը հանճարեղ է նաև նրանով, որ նա՛, միայն նա՛ Թումանյան ունի:

Թումանյանի հանճարը նաև նրանում է, որ լավ է իմացել համաշխարհային գրականությունը, ճանաչել է ժողովուրդներին իրենց ազգային առանձնահատկություններով ու մտածելակերպով: Դրա համար էլ նրա կատարած թարգմանությունները ոչ թե ապակու տակ դրված վարդեր են, այլ բոլորի համար տեսանելի ու շոշափելի բազմագույն ու բազմաբույր կենդանի վարդեր, որոնք ըմբոշխնելը իմաստություն և գերագույն հաճույք է տալիս մարդուն:

Եվ ցերեկույթի ժամանակ մենք ըմբոշխնեցինք այդ թարգմանությունների հմայքը: Հ. Թումանյանի շատ ստեղծագործություններ ձայնագրվել ու կատարվում են ամենատարբեր ոճերով: Լսեցինք աշակերտների կատարումները: Նրանց նվագակցում էր երաժշտության ուսուցիչ Վ.Շիրինյանը: Հիանալի կատարվեց նաև «Ա՜խ, ինչ լավ է սարի վրա» երգը, որը միակն է, որ ձայնագրել է բանաստեղծն ինքը:

Աշակերտները ներկայացրին «Անուշ»-ից առանձին դրվագներ. նրանք երգում և պարում էին: Բեմադրվեցին հեքիաթներ: Ընդհանուր ոգևորություն առաջացրեց «Կիկոսի մահը» հեքիաթի բեմադրությունը: Բոլոր մասնակիցներն էլ համոզիչ կերպարներ ներկայացրին, բայց առավել աչքի զարնեց Կիկոսի մոր դերակատար Ռոզա Գրիգորյանը: Նա այնքան արհեստավարժ ու նրբագեղ դրսևորեց իրեն, որ չկարողացանք զսպել մեր զգացմունքները. ընթացքում ծափահարում ու հիացմունքի խոսքեր էինք բարձրաձայնում: Մենք շատ ուրախ ենք, որ ունենք Թումանյան ընկալող, սիրող ու ներկայացնող սերունդ:

Ավարտին դպրոցի տնօրենը երախտագիտության խոսք ասաց միջոցառման մասնակիցներին ու կազմակերպիչներին: Այն հիմնականում վարում էին հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ջ.Սարգսյանն ու դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Դ.Մարտիրոսյանը: Դպրոցի ուսմասվար, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ն.Ավանեսյանն ամբողջ ընթացքում իր գորովալից հայացքով ոգևորում էր աշակերտներին: Եվ աստվածային հանճարի հետ ասես բոլորս սավառնում էինք երկնքում ու անհունի մեջ որոնում «աշխարհի» առեղծվածների պատասխանները:

Թումանյանը տիեզերական մտածողություն ուներ և հոգով այնքան մեծ էր, որ իր հանճարը ծառայեցրեց իրական մարդուն, նրա բարդ ու դժվարին կյանքին և ընդհանուր առմամբ ազգին ու հայրենիքին՝ մոմի պես անժամանակ հալվելով նրա տառապալից ճանապարհի թոհ ու բոհի մեջ:

Ամենայն հայոց բանաստեղծն անմահ է: Նա միշտ մեզ հետ է: Նա միշտ մեր մեջ է:

Իրինա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մարտունու արհեստագործական ուսումնարանի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԵՌՈՒՉԵՌԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

7☜

Մայիսի 23-ին դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Լիանա Բեգլարյանը կազմակերպեց ուշագրավ միջոցառում՝ "Праздник букваря" թեմայով 2-րդ «բ» դասարանցիների մասնակցությամբ: Աշակերտներն ասմունքում էին, երգում ռուսերեն, պարում վալս. մանկությունն էր թևածում մանկության լազուր ափերում: Միջոցառումը գովք էր ռուսերենին, լեզու, որ միջազգային տարածում ու ճանաչում ունի և նպաստում է ազգերի փոխհարաբերությունների զարգացմանը:

Մայիսի 24-ին և 26-ին 9-րդ «ա» և «բ» դասարանցիները հանդիսավորապես տոնակատարեցին միջին օղակն ավարտելու տարեշրջանը՝ այն վերածելով իսկական տոնի (դասղեկներ՝ Մարինե Խաչատրյան, Լիանա Բեգլարյան): Խանդավառ մի սերունդ որոշում է՝ ուսումը շարունակի՞, թե՞ հասարակությանն օգտակար գործի հմտանա և ուժերն արհեստով ծառայեցնի հանրությանը:

Մայիսի 25-ին դպրոցում արտակարգ տոնահանդես էր. դպրոցը Վերջին զանգի հրաժեշտով կյանքի ճանապարհ է բացում 12-րդ դասարանի ավագ սաների համար: Միջոցառումը բացում է դպրոցի փոխտնօրեն Արգենտինա Պողոսյանը: Բարեմաղթանքի հուզիչ խոսքեր են ասում Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու հովիվ տեր Անդրեաս քահանա Թավադյանը, դպրոցի տնօրեն Լիանա Հարությունյանը, դպրոցի նախկին տնօրեն Նազիկ Նալբանդյանը, շրջկրթբաժնի վարիչ Իրինա Սարգսյանը, որը ներկայացնում է նաև շրջվարչակազմի ղեկավար Վլադիմիր Կասյանի շնորհավորական ուղերձը:

Դպրոցի կրտսեր օղակն ավարտողների խոսքով կյանքի թրթիռը մի պահ ալեծփում է, ու վայրկյանը լուսավորում է սերն ու բարությունը, բերկրանքն ու քնքշությունը: Իրենց շնորհն են ցուցադրում Շուշիի պետական մանկապարտեզի սաները (տնօրեն՝ Էմմա Աբրահամյան): Շարունակականության պատգամ է հնչում տասնմերորդցիների կողմից, և փոխանցվում է ավանդական բանալին: Մի ժիր աղջնակ, 12-րդցու ուսին նստած, հնչեցնում է ավանդական Վերջին զանգը: Զանգը հնչեցնելու պատիվը տրվում է դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Հասմիկ Ազատյանին, որի համար ևս այն վերջինն էր:

Վերջին դասը սկսված է: Իրենց տեղն են գրավում օրվա հերոսները՝ 12-րդցիները:

Սպասի՛ր, մանկությո՛ւն, արագ մի՛ թռիր. թող այս սերունդն էլ իր հրաժեշտի խոսքն արտաբերի: Գուցե գարունը եկել է, որ նոր հևք առնի այս սերունդը, գուցե աստղերը վառվում են, որ չմոլորվեն նրանք, և արևը փայլում է, որ սիրով հրաժեշտ տան այս շրջանավարտները: Դպրոցական կյանքն անփոխարինելի հարստություն է, որ ամփոփում է անցյալն ու ներկան. անգնահատելի տարիներ, որ ոչնչով չեն փոխարինվի: Գեղեցիկ օր էր՝ ողողված սաների ժպիտով, հավատով և ուսուցիչների սիրով, ուսուցիչներ, որոնք տվել են հույսի բանալիներ: Երջանիկ հեքիաթ՝ նվիրած ուսուցիչներին: Նրանց արժանի խոսքեր են ընծայվում. թող շողա նրանց ստեղծագործ միտքը: Կփակվի մի մատյան ևս, բայց այս շրջանավարտների անունները կդրոշմվեն դպրոցի պատմության մեջ: Մեղեդիները, քաղցր խոսքերը հաջորդում են իրար, որ սիրո և լավ օրերի վկաներն են: Հնչում են սրտառուչ խոսքեր, ու գնահատանքի վեհ դրսևորումներ ցուցաբերվում: Սաներն իրենց շնորհալի դասղեկին՝ Անահիտ Ներսիսյանին, հանդիսավորապես կանչում են կենտրոն, և ամեն մեկը մի ժապավենված վարդ է նվիրում, իսկ ժապավենի ծայրն իրենք են բռնում՝ ի նշան միասնության. սա գեղեցիկի և նվիրումի դրսևորում է, իսկ իրենք՝ այդ նվիրման արդյունքները: Ի վերջո ծաղկաց փունջն է վայելում դասղեկը: Վերջում բոլոր ուսուցիչներին ընծայվում են ծաղիկներ և շնորհակալագրեր: Աննախադեպ միջոցառումը գեղեցիկի և երախտագիտության վառ դրսևորում էր:

Միջոցառումների շքերթը եզրափակեց զրոյական դասարանի ոսկի հեքիաթը: Սա այս տարվա վերջին հրաշալիքի ցուցադրումն էր: Մանուկների մոլորակի հրաշք պատումներով, աշխույժ երգերով մեր հայրենիքի ապագա տերերը վստահ ասում են, թե ովքեր են իրենք, ով է իրենցից ամեն մեկը:

Որերորդ անգամ կազմակերպչական ջիղով օժտված զրոյականի դասվար Նարինե Գրիգորյանը ներկայացնում է

իր հրաշք մանուկներին: Մանկական աշխարհի գունագեղությամբ փոքրիկները ցուցադրում են իրենց սերը Մաշտոցյան գրերին, մեր հերոսներին, սիրելի մայրիկներին, արտահայտում խաղաղության իրենց տենչանքը:

Մի մեծ շարք նվիրվում է արցախյան առօրյայի պատկերներին՝ երկանք ու խնոցի, թեժ թոնիր ու հունցած հաց: Դասվարը ներկայանում է տան գլխավորի՝ այայի կերպարով, որ, շուրջը հավաքած թոռներին, բացատրում է հացի արարումը, պատվիրում թոռներին ջուր բերել դիրքերից հոգնած տուն եկող տղամարդ զինվորների համար... Թոռներն օգնում են այային, կատարում նրա պատվերները, իսկ ինքը պատմում է ավանդապատումներ. ասում են՝ լավաշը դնում են զինվոր բալի խուրջինումը, որ զինվորը առոք-փառոք գնա ու հետ գա...

Այբուբենյան գնացքով ավարտվում է տպավորիչ միջոցառումը:

Միջոցառումների այս առատությունը մատնանշում է ուսուցիչների տքնաջան աշխատանքը, նրանց նվիրվածությունն իրենց սրբանվեր գործին:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՄՓՈՓԵՑԻՆՔ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Աննա Ավանեսյանի հետ ամփոփեցինք օլիմպիադայի արդյունքները:

Ներդպրոցական փուլին մասնակցել են շրջանի բոլոր դպրոցները, շրջանային փուլին, բացառությամբ Ավդուռի և Մյուրիշենի հիմնական դպրոցների՝ մյուս բոլոր 34 դպրոցները:

Ա.Ավանեսյանը նշեց, որ օլիմպիադայի բոլոր փուլերում առավել մեծ ակտիվություն նկատվել են մաթեմատիկա, հայոց լեզու, աշխարհագրություն, ռուսաց լեզու և կենսաբանություն առարկաներից: Աշակերտների մասնակցությունն այս առարկաներից կազմել է 64,3 տոկոս: Նկատվել է պասիվ մասնակցություն ֆիզիկա, քիմիա, առարկաներից, իսկ ինֆորմատիկա առարկայից ընդհանրապես մասնակից չի եղել: Մաթեմատիկայից մեծ ակտիվություն են ցուցաբերել 5-8-րդ դասարանների աշակերտները: Այս առարկայից հաջողությունների զգալի մասն արձանագրվել է հենց նշված դասարաններում:

Օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել են Մարտունու հ.1, հ.2, Ճարտարի հ.1, հ.3, հ.4, հ.5, Հերհերի, Աշանի, Բերդաշենի, Թաղավարդի, Կոլխոզաշենի, Խնուշինակի, Գիշու, Կաղարծու, Սոսի, Սարգսաշենի, Ջիվանիի, Շեխերի դպրոցների աշակերտները:

Հանրապետական փուլի արդյունքներով ԿԳՍ նախարարության կողմից 1-ին կարգի դիպլոմով ու դրամական պարգևով պարգևատրվել է 4, 2-րդ կարգի դիպլոմով ու դրամական պարգևով՝ 5, 3-րդ կարգի դիպլոմով ու դրամական պարգևով՝ 3, գովասանագրով՝ 10 աշակերտ:

Օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցել է 15 աշակերտ՝ մաթեմատիկա, հայ գրականություն, պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, անգլերեն, կենսաբանություն, աշխարհագրություն առարկաներից:

Եզրափակիչ փուլում դիպլոմներով և գովասանագրերով պարգևատրվել են՝ Վարդինե Բաղասյան (Թաղավարդի մ/դ , 9-րդ դաս., պատմություն, 2-րդ կարգի դիպլոմ), Արիաննա Սարգսյան (Ճարտարի հ.1 մ/դ, 11-րդ դաս., պատմություն, գովասանագիր), Լիլյա Օհանյան /Ճարտարի հ.3 հ/դ, 9-րդ դաս., հայոց եկեղեցու պատմություն, 3-րդ կարգի դիպլոմ, Արիաննա Սարգսյան (Ճարտարի հ.1 մ/դ, 11-րդ դաս., հայոց եկեղեցու պատմություն, 2-րդ կարգի դիպլոմ), Գևորգ Ավանեսյան (Մարտունու հ.1 մ/դ, 10-րդ դասարան, կենսաբանություն, 2-րդ կարգի դիպլոմ), Աննա Մուսայելյան (Խնուշինակի մ/դ, 10-րդ դաս., աշխարհագրություն, 2-րդ կարգի դիպլոմ), Աննա Պետրոսյան (Մարտունու հ.1 մ/դ, 10-րդ դաս., հայ գրականություն, գովասանագիր):

Ա.Ավանեսյանը գոհունակությամբ արտահայտվեց այս ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլում աշակերտների մասնակցության և գրանցած արդյունքների մասին: Անցած տարվա համեմատ այս ուսումնականում ոչ միայն մեծ էր մասնակցող աշակերտների թիվը, այլև ունեցան միջազգային օլիմպիադայի հավակնորդ երկու աշակերտ՝ Գևորգ Ավանեսյանը՝ կենսաբանություն, Աննա Մուսայելյանը՝ աշխարհագրություն առարկաներից:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 13.06.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: